



# Սյունյաց Երկիր

ՈՒՐԲԱԹ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016Թ.  
№ 31 (407)

[www.syuniacyerkir.am](http://www.syuniacyerkir.am)

**Միասին  
դեռ շատ  
անելիք ունենք**

Աշոտ Հայրապետյան



## ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ.

«Պիտի կարողանաս  
Նյութական եւ սոցիալական  
խնդիրներից բացի այլ  
խնդիրներ եւս տեսնել, որոնք  
ոչ պակաս կարեւոր են...»

Հարցազրույց  
վերադարձված  
հարցազրույցների  
վերադարձված

Կապան համայնքի ղեկավարի  
թեկնածու, Կապանի գործող  
քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը  
պատասխանում է «Սյունյաց Երկիր»  
հարցերին:

**Ե**վս մի քանի օր, եւ Կապանում տեղի կունենան  
համայնքի ղեկավարի ու համայնքի ավագանու  
ընտրություններ:

Վերջին քսան տարում, առհասարակ, մարզկենտրոնում  
ընտրություններն անցել են ակնհայտ մրցակցության,  
երբեմն՝ լարվածության, հասարակական-քաղաքական  
ուժերի առավել ակտիվության, հանրության տարաբեւեռության  
պայմաններում: Այդ ամենը՝ ոչ

միայն համապետական, այլ նաեւ տեղական ինքնակառավարման  
մարմինների ընտրությունների ժամանակ:

Նախընտրական ներկա մթնոլորտն այդ առումով,  
ըստ էության, չի տարբերվում նախորդ ժամանակներից:

Ամեն մի ընտրապայքար, սովորաբար, ունենում է իր  
առաջատարները կամ, ինչպես ընդունված է ասել, իր  
ֆավորիտները: Հոկտեմբերի 2-ի կապանյան ընտրությունները  
բացառություն չեն այդ առումով եւս:

Համայնքի ղեկավարի համար մրցապայքարում  
առաջատարներից մեկը, անտարակույս, Աշոտ Հայրապետյանն  
է: Նա կապանյան բարեհամբավ գերդաստանի գավակ է,  
հանրության մտավորական թելի ներկայացուցիչ,  
անցած չորս տարում կարողացել է ապացուցել, որ ի վիճակի  
է մարզկենտրոնն արժանապատվորեն ղեկավարել ու  
ներկայացնել մարզային, տարածաշրջանային, հանրապետական  
հարթակներում, կարողացել է հանդգել, որ գործի մարդ է ու  
իր բնօրրանի նվիրյալ

է, ունի բազում ծրագրեր Կապանի օրախնդիր հարցերի  
վերաբերյալ, տիրապետում է գործընկերների հետ հարաբերվելու  
մշակույթին, հասանելի է համայնքի ամեն մի բնակչի:

Ներկա ընտրապայքարում, սակայն, Աշոտ Հայրապետյանը  
հանդես է գալիս այնպիսի իրավիճակում, որ կամ թե ականա  
նրան են ուղղվում մարդկանց՝ իրենց ներկա կյանքի  
բոլոր ոլորտներին առնչվող դժգոհությունները՝ անկախ  
նրանից՝ դա քաղաքապետի լիազորությունների շրջանակի  
մեջ է առնչվում, թե՞ ոչ: Նա մարզկենտրոնի գործող  
քաղաքապետն է, իշխող կուսակցության՝ Հայաստանի  
հանրապետական կուսակցության թեկնածուն, եւ, որպես  
կանոն, պատասխանատու է առկա խնդիրների, թերությունների,  
մարդկանց մտահոգություն եւ անհանգստություն պատճառող բա-



Գ.Նժդեհի անվան հրապարակում բացված լուսաձայնային եֆեկրներով շարվածները

ԱՅՑԵՍԻՐ

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. Ծնվել է 1971 թվականի ապրիլի 10-ին Կապան քաղաքում: 1978-1988թթ. սովորել է ավարտել է Կապանի N3 միջնակարգ ռուսական դպրոցը: 1988թ. ընդունվել է Երեւանի ճարտարագիտական համալսարանի մեքենաշինական ֆակուլտետը եւ ավարտել 1993թ.՝ ստանալով մեքենաշինության տեխնոլոգի որակավորում: 1990-1993թթ. սովորել է բուհին կից ռազմական ամբիոնում՝ ստացել հրետանավորի մասնագիտություն եւ լեյտենանտի կոչում: 1993-1995թթ. մասնակցել է ՀՀ ինքնապաշտպանական ջոկատների կազմավորմանը, ՀՀ հարավարեւելյան սահմանների պաշտպանությանը եւ Արցախի համար մղվող մարտերին: Ունի կապիտանի կոչում: 1997-1998թթ. աշխատել է «Սյունիքի մարզային էլեկտրացանցեր» ՊԲԸ իրացման բաժնի ավագ մասնագետ: 1998-2001թթ. աշխատել է «Հայփոստ» ՊԲԸ «Սյունիքի փոստատուն դուստր» ՓԲԸ փոխտնօրեն: 2001-2002թթ. ղեկավարել է «Հայփոստ» ՊԲԸ «Սյունիքի մարզային ներկայացուցչությունը»: 2002 թվականից մինչեւ 2012 թվականի նոյեմբերի 9-ը աշխատել է «Հայփոստ» ՓԲԸ «Կապանի փոստային մասնաճյուղի» տնօրեն: 2012 թվականի սեպտեմբերի 9-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ընտրվել է Կապան համայնքի ղեկավար: 2012 թվականի նոյեմբերի 13-ից ստանձնել է Կապան համայնքի ղեկավարի պաշտոնը: 2006թ. փետրվարից Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է: Պարգևատրվել է ՀՀ պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ», «ՀՀ զինված ուժեր 20 տարի» մեդալներով, «97-րդ մոտոհրաձգային բրիգադի 15-ամյակի» կրծքանշանով, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության «Նշանակալի ավանդի համար» հուշամեդալով, «Դրաստամատ Կանայան» մեդալով եւ այլն: «Համագային վստահություն» խորհրդի «Վստահության վարկանիշ-2015» անվանակոչման արդյունքներով արժանացել է «Տարվա քաղաքապետ» մրցանակին: Ամուսնացած է, ունի մեկ որդի, երկու դուստր:

Խոսք  
Ընտրողին

**Յ**արգելի՛ կապանցի երկրորդ անգամ եմ ներկայանում Ձեզ՝ որպես Կապանի քաղաքապետի թեկնածու: Այս որոշմանը հանգել եմ ոչ միանգամից. այն նշանակում է եւ գիտակցված պատասխանատվություն իմ քաղաքի եւ համաքաղաքացիների հանդեպ, եւ մտահոգություն անցած չորս տարում իրականացրած ծրագրերի, ունեցած զաղափարների՝

արդեն դրած հիմքերի շարունակականության ապահովման համար, եւ քառամյա աշխատանքի վերաբերյալ իմ համաքաղաքացիների արձագանքների առարկայական արտացոլում: Ինքս վստահելով իմ ուժերին (որի հիմքում սերն ու նվիրվածությունն է առ հայրենի քաղաք) եւ երկրորդ անգամ հայցելով ձեր վստահությունն ու քվե՛ն՝ կարծում եմ՝ ապագա աշխատանքի արդյունավետությանը



13 հոկտեմբերի 2015թ., Կապանի բարեկարգված կենտրոնական հրապարակի եւ «Երգող» շարվածների բացումը

13 հոկտեմբերի 2015թ., Սերժ Սարգսյանի այցը Կապան, «Քաղաքի օր» միջոցառումների մեկնարկը



ՖՈՏՈՍՏՄԻՐ

13 հոկտեմբերի 2015թ., Կապանի քաղաքապետարանի մանկական երգչախումբը



ՖՈՏՈՍՏՄԻՐ



ՖՈՏՈՍՏՄԻՐ

կնկաստի նաև համայնքի ղեկավարման գործում ձեռք բերած փորձը: Նախորդ ընտրարշավին ներկայացել են «Ճանաչենք անցյալը, շտկենք ներկան, կերտենք ապագան» կարգախոսով, իհարկե, արած-չարածիս գնահատականը, նախնաառաջ, Դուք եք տալիս, բայց իմ ամենօրյա աշխատանքում եւ ծրագրած ամելիքներում որպես ուղենիշ ունեցել եւ առաջնորդվել եմ այս կարգախոսով: Երբեմնի ծաղկուն, բարեկարգ ու գրավիչ Կապանի մասին հիշողությունները շոշափելի ներկա դարձնելու խոստումնս, կարծում եմ, անհրատեսական չէր. արդյունքի գնահատողը կրկին Դուք եք: Այս անգամ ընտրել եմ «Սիսիսիս դեռ շատ անելիք ունենք» կարգախոսը, որն իր մեջ ներառում է եւ իրագործվածի՝ դեռևս բավարար չլինելու գիտակցումը, եւ արդեն դրված հիմքերի շարունակականությունը տեսանելի դարձնելու գրավականը, եւ քաղաքի վաղվա օրվա կերտման գործում բոլորիս միասնական ջանքերի մեկտեղման ցանկությունը: 2012-ին նշել էի նաև, որ պայքարս խնդիրների դեմ է եւ ոչ՝ անձանց, եւ ձգտել եմ, որ հանգվեք դրանում: Փորձել եմ անել հնարավորն ու երբեմն՝ անհնարին թվացողը՝ Կապանը 2016 թվական փոքրինչ թեթևացած հոգսերով հասցնելու համար... Իհարկե, անելիքները բազում են ու շատ, եւ չեմ կարծում, թե ամենամեծ լավատեսության, ջանքերի եւ ցանկության դեպքում անգամ մի քանի տարում հնարավոր է լիովին լուծել համայնքի առջև ծառայած բոլոր խնդիրները: Առավել իրատեսորեն, քան ձեզնից յուրաքանչյուրը, գիտեմ եւ պատկերացում եմ Կապանում առկա ամեն խնդրի ձեռնարկումն ու հասցեն: Բայց կարծում եմ՝ կարողացել եմ ցույց տալ եւ ներշնչել, որ համատեղ ուժերով, յուրաքանչյուրիս մասնակցությամբ ու նախաձեռնությամբ կարող ենք առաջ գնալ: Հարգելի՛ ընտրող Շնորհակալ եմ անցած չորս տարվա վստահության, համայնքային իշխանու-

թյան կողքին լինելու, արվածը գնահատելու, թերացումներն ու անելիքները հուշելու, մշտապես արվող առաջարկների եւ գաղափարների, նաև առողջ քննադատության եւ ինձ իրատես ու սթափ պահելու համար: Ձգում եմ յուրաքանչյուրիդ խորհրդի կարիքը եւ ձգտել եմ իմ գործունեության ընթացքում մշտապես հաշվետու լինել բոլորիդ. թե՛ իմ, թե՛ համայնքապետարանի աշխատանքը եղել է թափանցիկ: Մեզ միավորում է Կապանի հանդեպ սերը. հիշենք, որ այսօրվա ընտրությամբ կեր-

տում ենք քաղաքի ապագան: Կատարենք այդ ընտրությունը սրտի թելադրանքով, աչքի հուշածով, բանական վերլուծությամբ: Հավատալով Ձեր ողջամտությանն ու խելամիտ ընտրությանը՝ եւս մեկ անգամ հայցում եմ Ձեր թույլտվությունը՝ ծառայելու Կապան քաղաքիս եւ նրա բնակիչներին: Արդարամիտ, ազատ եւ խաղաղ ընտրություն՝ բոլորիս:

ԱՆՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՆՆ



13 հոկտեմբերի 2015թ., Կապանի քաղաքապետարանի կանանց երգչախումբը, մենակատար՝ Արեն Պերրոսյան



ՖՈՏՈՍՏՄԻՐ

Դաշխարհային

# Կապան, 2013, 2014, 2015, 2016 թվականներ

## ՖԻՆԱՆՍԱԲՈՒԴԵՏԱՅԻՆ ՈԼՈՐՏ

Վերջին 4 տարում Կապանի համայնքային բյուջեն աճել է 32,8 տոկոսով կամ 1.33 անգամ:

Եթե 2012թ. այն եղել է 973 մլն 540 հազար 600 դրամ, 2016-ին կազմում է 1 մլրդ 297 մլն 002 հազար 400 դրամ:

2012 թ. սեփական եկամուտներն ըստ պլանի եղել են 382 մլն 288 հազար 400 դրամ, փաստացի հավաքվել է 289 մլն 880 հազար 500 դրամ: Իսկ 2016թ. սեփական եկամուտները 394 մլն 629 000 դրամ են, 4 տարում աճել են 3,2 տոկոսով:

2012-ին համայնքային բյուջեն կատարվել է 90,4 տոկոսով, 2016-ին առաջին կիսամյակում նախատեսված պլանի 87 տոկոսով, ավարտում 2015-ի տվյալներով համայնքային բյուջեն կատարվել էր 98,6 տոկոսով:

2012-ին սեփական եկամուտները կատարվել են 75,7 տոկոսով, այս տարվա կեսին՝ նախատեսված պլանի 89 տոկոսով, 2015-ին հավաքվել են 95,5 տոկոսով:

Անցած 4 տարում 33 պետբյուջեից ըստ համայնքի ներկայացրած առաջնահերթ ծրագրերի՝ մոտ 526 մլն 300 000 դրամի ներդրում է կատարվել տարբեր համայնքային խնդիրների լուծման համար: Սրանից չեն մտնում կառավարության կողմից պետական գերատեսչությունների համար կատարված ներդրումները, շենքերի կառուցումը, վերանորոգումը և այլն, օրինակ հիվանդանոցի նորոգում, դատարանի և ավագ դպրոցի կառուցում և այլն, այլ վերաբերում են զուտ համայնքին:

Միջազգային կազմակերպությունների և տեղական դոնորների, որոնցից ամենախոշորները 2 հանքարդյունաբերական ձեռնարկություններն են, կատարած ներդրումները համայնքում 4 տարում կազմում են 1 մլրդ 400 մլն դրամ:

Կապանում այսօր գործում է համայնքային ոչ առևտրային 28 կազմակերպություն, որից 12-ը նախադպրոցական ուսումնական հաստատություն է: Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների թիվը 2012-ի համեմատ աճել է 31-ով՝ 968-ից հասնելով 999-ի: Քաղաքապետարանում զուտ աշխատողներ չեն կրճատվել, նրանց աշխատանքից դուրս գալուց հետո կրճատվել են հաստիքներ, 12 թվականին եղել է 87 հաստիք, այժմ՝ 78 հաստիք:

Աշտ Չայրապետյանն ի սկզբանե նաև որդեգրեց կադրային ջարդի չզնալու, քաղաքապետարանում և ենթակա հիմնարկներում առկա աշխատակիցների մասնագիտական հմտություններն ու փորձը գնահատելու ճանապարհով: Փաստն ակնհայտ է, նա շարունակեց աշխատել նախկինում գործող թիմի հետ:

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քարեկարգվել են դեպի Բարաբաթում, Շինարարներ, Լենինաբեր, Վահանավանք տանող ճանապարհները, Ձորք քաղանասի փողոցները, Ազատամարտիկների, Մ.Պապյան, Երկաթուղայինների փողոցը, Մ.Հարությունյան, Շինարարներ քաղամասերի բակերը, Ա.Մանուկյան փողոցի մայթի մի հատվածը, Ա.Մանուկյան 1-ի 2 անցումները, մշակույթի կենտրոն-քաղաքապետարան ճանապարհահատվածը:

Հիմնովին կամ մասնակի նորոգվել է 68 վերելակ/որից 6-ը՝ 2 անգամ/, դրա համար ծախսվել է 52 մլն 255 հազար դրամ՝ որից մոտ 22 մլն 850 հազարը՝ պետբյուջեից, 4,8 մլն-ը Կապան հիմնադրամից, 24,6 մլն

ներդրվել է համայնքային բյուջեից: Վերելակներ են նորոգվել Դավիթ Բեկ, Մուշեղ Հարությունյան, Ռաֆայել Մինասյան, Մելիք-Ստեփանյան, Երկաթուղայինների, Մինաս Պապյան, Բաղաբերդ փողոցներում ու քաղամասերում:

Նորոգված վերելակների հետագա սպասարկումն ապահովելու, անխափան և անվտանգ աշխատանքը կազմակերպելու համար նորոգումներից հետո կնքվել է եռակողմ պայմանագիր քաղաքապետարանի, համատիրության և «Վերելակ» ԱԿ հետ՝ դրանց հետագա անվտանգ սպասարկումն իրականացնելու և նորոգումների արդյունավետությանը հետեւելու համար:

Պետբյուջեի միջոցներով նորոգվել է 12 տանիք, ծախսվել՝ մոտ 91 մլն դրամ, եւս 6 տանիք նորոգվել է համատիրությունների կամ կոմունալ տնտեսության ուժերով՝ քաղաքապետարանի տրամադրած շինանյութերի միջոցով: Տանիքները նորոգվել են Ռ.Մինասյան, Գ. Նժդեհ, Շինարարների, Մինաս Պապյան և այլ քաղամասերում:

Ըստ համայնքի կողմից 33 կառավարությանը ներկայացված բնապահպանական ծրագրի՝ բնապահպանական վճարներից կատարված մասհանումով 4 տարի է՝ իրականացվում է Ա.Մանուկյան փողոցի մայթերի նորոգումը և կանաչապատումը, 4 տարում ներդրվել է 52 մլն 150 հազար դրամ, որից 7,5 մլն՝ ԶՊՄԿ-ն, 2,9 մլն դրամ՝ համայնքային բյուջեն:

Նորոգված հատվածներում նաև հիմնովին փոխվում են բոլոր մալուխները, հեմասյունները: Ծրագիրը շարունակական է, մայթի երկկողմանի ամբողջական նորոգման և կանաչապատման համար անհրաժեշտ է 150 մլն դրամ:

Տեղադրվել են Կապան քաղաքի մուտքերը խորհրդանշող 3 լուսային վահանակներ, նաև՝ ճանապարհային անվտանգության հայելի:

Նորոգման աշխատանքներ են կատարվել նաև Ա.Սեբրոպ Մաշտոց եկեղեցում՝ 2 մլն 730 հազ. դրամ:

Վաչագանում նոր տարածք է հատկացվել՝ որպես գերեզմանատեղի:

Վաչագան գետի վրա կառուցվել է նոր ջրավազան, որտեղ հավաքվում են գետի բերած աղբը, քարերը, ավազն ու ճյուղերը՝ հունի հետագա աղտոտումն ու բարձրացումը կանխելու համար, այն պարբերաբար մաքրվում է կոմունալ տնտեսության կողմից /ԶՊՄԿ, 28 մլն դրամ/:

Վաչագան գետի՝ Գ.Նժդեհի հուշարձան տանող կամրջից դեպի Կապանի բժշկական կենտրոնն ընկած հատվածում նաև 88մ հենապատ է կառուցվել, խորացվել է գետի հունը, մաքրվել ավելորդ քարերից ու գրունտից: Նախատեսվում է շարունակել հենապատի կառուցումը /ԶՊՄԿ, 22 մլն դրամ/:

**II Քաղաքապետարանի նախածեռնությամբ և «ԶՊՄԿ» ՓԲԸ աջակցությամբ երկար տարիների ընդմիջումից հետո հիմնովին մաքրվեց և բարեկարգվեց նաև Վաչագան գետի՝ քաղաքի կենտրոնական մասով անցնող հիմնական՝ մոտ 920մ երկարությամբ հատվածը:**

Կանաչապատվել, նորոգվել և բարեկարգվել է քաղաքապետարանին հարակից զբոսայգին՝ 5 մլն 500 հազ. դրամ:



Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ



Բաղաբերդի հուշահամալիրում

Ասիական բանկի և Եվրոպական զարգացման բանկի ավելի քան 8 մլն դոլար ներդրմամբ իրականացվեց խմելու ջրի ներքին ցանցի բարեկարգումը, որը դեռևս շարունակվում է:

Քարեկարգվել և կանաչապատվել է Վ.Սարգսյանի անվան մանկական զբոսայգին, կառուցվել ոռոգման նոր ցանց, տեղադրվել 10 հատ նոր մատարան, արտաքին լուսավորության 15 մեծ լուսատու և 43 լուսակիր:

Քարեկարգվել և կանաչապատվել է Շահունյան փողոցի «Խաղաղության պուրակը», կառուցվել ջրահեռացման համակարգ, արտաքին լուսավորության բարելավման նպատակով տեղադրվել 15 մեծ լուսատու, մատարաններ:

«Կամրջակ» բարեգործական կազմակերպության օժանդակությամբ հիմնադրվել է Շղարշիկ քաղամասի վաղուց չգործող օրվա կարգավորիչ ջրամբարը և նոր ջրատար խողովակաշար անցկացվել /մոտ 5 մլն դրամ/:

Հիմնովին նորոգվել է Կապանի

Բաղաբերդի հուշահամալիրում գտնվող գոկված ազատամարտիկների եղբայրական գերեզմանոցը՝ 7 մլն դրամ /ԶՊՄԿ/: Մաքրման և բարեկարգման աշխատանքներին զուգահեռ տեղադրվել են նոր լուսատուներ, նորոգվել է զրուցարանը:

2015-ին ավարտվեցին Գ.Նժդեհի հրապարակում գտնվող զբոսայգու վերանորոգման աշխատանքները և հանդիսավոր արարողությամբ, 33 նախագահ Ա.Սարգսյանի մասնակցությամբ, գործարկվեցին համրապետությունում երկրորդ լուսաձայնային էֆեկտներով շարունակվածները: Այժմ Կապանի կենտրոնում կա գեղեցիկ հանգստի գոտի, որն իրականություն դարձավ «Ջանգեզուրի պղնձամուխընային կոմբինատ» ՓԲԸ 540 մլն դրամ ներդրման շնորհիվ: Հարկ նշել, որ ծրագրի իրականացման երաշխիքը տարածքը վարձակալությամբ ընկերությանը տալն էր, որն էլ իրականացվեց համայնքի շահից ելնելով:

# Աշոտ Հայրապետյանի՝ 2012 թվականին Կապան համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրվելիս ներկայացրած նախընտրական ծրագրի կադարման պատկերը պաշտոնավարումից չորս տարի հետո

## Քաղաքաշինություն, կոմունալ սպասարկում, ճանապարհաշինություն եւ փրանսպորտի բնագավառ

■ բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգման շարունակականության ապահովում, շենքերի արտաքին տեսքի շտկում եւ բարեկարգում

ՀՀ պետությունը եւ համայնքային բյուջեի միջոցներով նորոգվել է 12 տանիք՝ մոտ 91 մլն դրամով, եւս 6 տանիք նորոգվել է համատիրությունների կամ կոմունալ տնտեսության ուժերով՝ քաղաքապետարանի տրամադրած շինանյութերի միջոցով:

■ սանիտարական մաքրման, աղբահանության անխափան աշխատանքների կազմակերպում

Ապահովվել է քաղաքի սանմաքրման, աղբահանության անխափան աշխատանքը, կոմունալ ծառայությունը դոնորներից նվեր է ստացել /ոչ աղբատար/ 3 մեքենա, որոնք նպաստում են այլ ծառայությունների իրականացմանը: Քաղաքում կառուցվել է 12 նոր աղբատեղի, նորոգվել 6-ը: Տեղադրվել է 41 նոր աղբաման կենցաղային աղբի համար, նաեւ 90 աղբաման պլաստիկ շէրի համար:

■ գիշերային լուսավորության բարելավում

Քաղաքի տարբեր թաղամասերում, հրապարակներում, հանգստյան գոտիներում տեղադրվել են նոր մեծ կամ փոքր լուսատուներ, շատ վայրերում անց է կացվել նոր լուսավորություն, նորոգվել խափանվածը: Վերականգնվել է քաղաք մտնող թունելի լուսավորությունը, լուսավորվել է Մ-2 միջպետական մայրուղին: Ընդհանուր առմամբ քաղաքում տեղադրվել է 670 նոր լուսատու: Իսկ էներգախնայող լուսատուների տեղադրմամբ քաղաքում կատարվել է մոտ 38,3% էներգախնայողություն:

■ բազմահարկ բնակելի շենքերի վերելակների անխափան աշխատանքի ապահովում եւ անվտանգ շահագործում

Հիմնովին կամ մասնակի նորոգվել է 68 վերելակ /որից 6-ը՝ 2 անգամ/, դրա համար ծախսվել է 52 մլն 255 հազար դրամ:

Նորոգված վերելակների հետագա սպասարկումն ապահովելու, անխափան եւ անվտանգ աշխատանքը կազմակերպելու համար նորոգումներից հետո կնքվել է եռակողմ պայմանագիր քաղաքապետարանի, համատիրության եւ «Վերելակ» ԱԿ հետ՝ դրանց հետագա անվտանգ սպասարկումն իրականացնելու եւ նորոգումների արդյունավետությանը հետեւելու համար:

■ փողոցների, ներթափանցանքային ճանապարհների, մայրերի եւ բակերի բարեկարգման աշխատանքների իրականացում

Բարեկարգվել են դեպի Բարաբաթում, Շինարարներ, Լեւոնաբեր, Վահանավանք տանող ճանապարհները, Չորք թաղամասի փողոցները, Ազատամարտիկների, Մ.Պապյան, Երկաթուղայինների փողոցները, Մ.Հարությունյան, Շինարարներ թաղամասերի բակերը, Ա.Մանուկյան փողոցի մայթի մի հատվածը, Ա.Մանուկյան շենքի անցումները, մշակույթի կենտրոն-քաղաքապետարան ճանապարհահատվածը:

■ հանգստի գոտիների, խաղահրապարակների պահպանություն եւ նորերի ստեղծում

Բարեկարգվել է խաղաղության պուրակը, քաղաքապետարանի մերձակա այգին, Վ.Սարգսյանի անվան զբոսայգին, Գ.Նժդեհի անվան հուշահամալիրի լողավազանի տարածքը, բոլոր այս վայրերում տեղադրվել են նոր լուսատուներ, նստարաններ:

Սկսվել են Ռ.Մինասյան փողոցում խաղահրապարակի հիմնման աշխատանքները, լուսավորվել է Բաղաբերդ թաղամասի խաղահրապարակը, նորոգվում է նույն թաղամասի խաղաղաշտը, բարեկարգվել է Երկաթուղայիններ թաղամասի խաղաղաշտը:

Կապանում 8 վայր ապահովված է անվճար Wi Fi ինտերնետ-կապով՝ հանգստի գոտիներ, այգիներ:

■ քաղաքի թաղամասերի միջեւ հասարակական տրանսպորտի աշխատանքի բարելավում

Ապահովվել է արդեն գործող երթուղիների բնականոն գործունեությունը, գործարկվել է 4 նոր երթուղի՝ դեպի Բարաբաթում եւ Բաղաբերդ, նաեւ՝ N 9 եւ N 10:

■ քաղաքով անցնող միջպետական ճանապարհին ուսումնական հաստատությունների հարակից տարածքներում, հետիոտնի համար վերգետնյա անցումների կառուցման նպատակահարմարության ուսումնասիրում եւ իրականացում

Ուսումնասիրություն կատարվել է, վերգետնյա անցումներ չեն կառուցվել:

■ ինքնակամ շինարարության կանխարգելում եւ կասեցում

Հնարավորինս վերահսկվել է օրինականության սահմաններում է պահվել քաղաքում շինարարության իրականացումը: Չորս տարում քաղաքապետարանը գրանցել է ապօրինի շինարարության համար վարչական եւ քրեական պատասխանատվության մոտ 70 դեպք, համայնքային բյուջե է վճարվել մոտ 20 մլն դրամի վարչական տուգանք:

■ սելավատարների վերակառուցում

Քաղաքում նորոգվել է 13, մաքրվել՝ 16 սելավատար:

■ ապաստարաններին առնչվող խնդիրների լուծում

Ստեղծվել է քաղաքում առկա բոլոր հնարավոր ապաստարանների բազան, ճշտվել են դրանց հասցեներն ու սեփականատերերը, նրանք տեղեկացվել են անհրաժեշտության դեպքում տարածքները հանրությանը որպես ապաստարան տրամադրելու պահանջի մասին:

Արտակարգ իրավիճակների համար հիմնվել է պահեստային կառավարման կետ՝ անհրաժեշտ բոլոր պարագաներով եւ կապի միջոցներով:

■ շաբաթօրյակների ավանդույթի վերականգնում

Կապանում վերականգնվել են շաբաթօրյակները եւ պարբերաբար կազմակերպվել տարեկան մի քանի անգամ: Դրանց մասին նախապես տեղեկացվել են հիմնարկ-ծեմնարկությունները, բնակչությունը եւ ակտիվորեն մասնակցել: Շաբաթօրյակները կազմակերպվել են հատկապես տոնական օրերի նախօրյակներին:

■ զբոսաշրջությունը խթանող ծրագրերի իրականացում

Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ՝ զբոսաշրջային ոլորտով զբաղվող տեղական եւ միջազգային կազմակերպությունների, մասնագետների մասնակցությամբ, քաղաքապետարանը ձգտել է աշխատանքներ տանել համապատասխան ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, մշակվել են ծրագրեր:

■ հասարակական զուգարանների կառուցում

Հասարակական զուգարան չի հիմնվել:

Ճշտվել է քաղաքում գործող հանրային այն օբյեկտների բազան, որոնք ունեն զուգարաններ, նրանց հետ տարվել է բացատրական աշխատանք եւ ձեռք բերվել

պայմանավորվածություն՝ թույլատրել բնակիչներին անհրաժեշտության դեպքում օգտվել իրենց տարածքներում գործող զուգարաններից:

**Առողջապահության եւ սոցիալական ապահովության բնագավառ**

■ աջակցություն քաղաքի բուժօգնականներին

Հի իրականացվել է:

■ կադրերի համալրման նպատակով բժիշկ-մասնագետների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում հանրապետական գործադիր եւ տարածքային կառավարման մարմինների օժանդակությամբ

Քաղաքապետարանը տարբեր գրություններով եւ հիմնավորում-մամակներով դիմել է ՀՀ կառավարությանը, եւ ի վերջո հաջողվել է «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի ծննդաբերական բաժանմունքի մասնաշենքը պետական գույքի կառավարման վարչությունից վերադարձնել բժշկական կենտրոնի հաշվեկշիռ՝ հետագայում այն վերափոխելու որպես բնակելի շենք:

■ զոհված եւ հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումներ

Հի իրականացվել է:

■ կարիքավոր ընտանիքներին հասցեական օգնության ցուցաբերում

---

**II Ամեն տարի պարբերաբար օգնություն է տրամադրվել սոցիալապես անապահով խավերին՝ սննդի փաթեթների, դրամական միջոցների, շինանյութի, վառելիքայտի տեսքով (դրամական օգնություն՝ տարեկան մոտ 120 ընտանիքի, սննդի փաթեթ՝ տարեկան մոտ 150 ընտանիքի, ամեն տարի՝ մոտ 600 խմ վառելիքայտ):**

---

Քաղաքապետարանի պարբերական միջնորդությամբ նաեւ ոչ նպաստառու անապահով ընտանիքներն ընդգրկվում են սոցիալական ծառայության՝ միանվագ դրամական օգնությունների ցանկում:

**Կրթություն, մշակույթ եւ սպորտ**

■ նախակրթարանների թվի ավելացում, շենքային պայմանների բարելավում

Սկսվել է Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի մասնաշենքերից մեկի վերակառուցումը՝ որպես նախադպրոցական ուսումնական հաստատության շենք, մինչ այժմ կատարվել է մոտ 25 մլն դրամի ներդրում:

ՆՈՒՀ-երում ավելացել է 3 խումբ, 144-ով ավելացել է մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը:

Չորս տարում ՆՈՒՀ-երում կատարվել են մոտ 158 մլն դրամի նորոգման եւ գույքով համալրման աշխատանքներ:

■ նախակրթարաններում աստիճանական անցում երեխաների անվճար հաճախելիության

Դեռեւս անվճար հաճախելիության հնարավոր չէ անցնել, սակայն, ի տարբերություն այլ համայնքների, երեխաների վարձավճարն անցած չորս տարում մնացել է անփոփոխ, այն դեպքում, երբ 2012թ. մեկ երեխայի պահպանման ամսական միջին ծախսը մոտ 14 հազար դրամ էր, 2016-

ին՝ 18 հազար դրամ:

Միեւնույն ժամանակ, տարեկան սոցիալապես անապահով մոտ 100 երեխա օգտվում է վարձավճարի մասնակի կամ լրիվ զեղչից:

■ նախակրթարանների կադրերի մասնագիտական վերապատրաստում

Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղի, ԿԳ նախարարության եւ այլ կազմակերպությունների հետ պարբերաբար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ ՆՈՒՀ-երի դաստիարակների համար, Կապանի բժշկական կենտրոնի հետ՝ բուժքույրերի համար:

ՆՈՒՀ-երում նոր կադրեր ընդունելիս՝ որդեգրվել է մասնագիտական կրթության չափանիշը հաշվի առնելու քաղաքականություն: Կադրերի մասնագիտական կրթություն ունենալը կարեւորելու հետեւողականության շնորհիվ ոչ մասնագետ կադրերի հիմնական մասն ստացել է բարձրագույն կամ միջին մասնագիտական համապատասխան կրթություն:

4 տարի առաջվա 61 հոգուց այսօր մասնագիտական կրթություն չունի ընդամենը 4 դաստիարակ:

■ համայնքային ենթակառուցված կրթական, մշակութային եւ սպորտային հաստատությունների նորոգում, նոր գույքով ապահովում

Հիմնանորոգվել եւ ջեռուցվել է թիվ 1 երաժշտական դպրոցը, ավարտվել է արվեստի մանկական դպրոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փուլը, եւ մինչեւ տարեվերջ այն նորոգված եւ ջեռուցված կլինի:

Նորոգման աշխատանքներ են կատարվել մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցում, նորոգվում է Դ.Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի հատակը, դռներ եւ պատուհաններ են փոխվել, մասնակի նորոգումներ են կատարվել որոշ ենթակառուցվածքներում, գույքի համալրում՝ բոլոր ենթակառուցվածքներում: Արտադպրոցական ուսումնական հաստատություններում եւ մշակութային օջախներում, ակումբազրադարանային միավորումում կատարվել են նորոգման եւ գույքով համալրման մոտ 229 մլն դրամի աշխատանքներ:

■ աջակցություն երաժշտական եւ արվեստի դպրոցներին՝ ազգային նվազարանների բաժիններում սովորող երեխաների թվի ավելացման նպատակով

Նորոգման եւ վերազինման աշխատանքներ են կատարվել այս կրթօջախներում, արտադպրոցական ուսումնական հաստատություններում եւ վարձավճարի չափը մնացել է անփոփոխ: Վերջին 4 տարում 30-ով ավելացել է նրանց սաների թիվը:

■ բակերում սպորտային հրապարակների ստեղծում

Հի իրականացվել է:

■ հուշարձանների, քաղաքում տեղադրված արձանների, քանդակների պահպանություն, եկեղեցու տարածքի բարեկարգում

Նորոգման աշխատանքներ են կատարվել Սուրբ Մ.Մաշտոց եկեղեցում, սկսվել է նրա շրջակա տարածքի բարեկարգումը: Պարբերաբար մաքրվել են թարմացվել են քաղաքի հուշարձանները:

■ գրադարանների, թանգարանների ու պատկերասրահի պայմանների բարելավում, աջակցություն արվեստագետներին

Նորոգման աշխատանքներ են կա-

Խոսք եւ գործ

# Աշոտ Յայրապետյանի՝ 2012 թվականին Կապան համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրվելիս ներկայացրած նախընտրական ծրագրի կարարման պայմանները պաշտոնավարումից չորս տարի հետո

Էջ 5 տարվել է նոր ցուցարահ է ավելացել Շմակոն Մովսիսյանի անվան Կապանի պատմության թանգարանում:

Գույքով եւ համակարգիչներով վերազինվել են գրադարանները, ապահովվել ինտերնետ կապով: Ակունքագրադարանային միավորման հենքի վրա հիմնվել է էլեկտրոնային գրադարանը:

Պարբերաբար կազմակերպվել են կապանցի արվեստագետների ցուցահանդեսներ:

### Բնապահպանություն

■ կանաչ գոտիների ստեղծում, մայթերի ծերացած ծառերի փոխարինում երիտասարդ ու նոր ծառատեսակներով:

Բարեկարգվել են զբոսայգիները, նոր սիզամարգեր են ավելացվել, անց են կացվել ոռոգման համակարգեր, եւ ապահովվում է կանաչ տարածքների խնամքը: Քաղաքի կենտրոնական մայթի նորոգված հատվածում ստեղծվել են կանաչ տարածքներ, քաղաքում պարբերաբար կատարվում է ծառատունկ, հին ծառերը փոխարինվում են քաղաքաշինության համար առավել հարմար ծառատեսակներով:

■ խմելու ջրի որակի հսկողության ուղղված ծրագրերի իրականացում

Ասիական զարգացման եւ Եվրոպական զարգացման բանկի մոտ 8 մլն դոլար ներդրմամբ փոխվել է քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցը, կառուցվել պոմպակայան, աշխատանքները շարունակվում են:

Շղարշիկուն կառուցվել է նոր ջրագիծ եւ նորոգվել օրվա կարգավորիչ ջրամբարը:

Քաղաքապետարանն ամենօրյա տեղեկատվություն է ստանում թաղամասերից եւ ամեն շաբաթ հրապարակում ջրամատակարարման գրաֆիկի իրական պատկերը՝ «Հայքըմուկուլուդու» ուշադրությունը հրավիրելով խափանումների եւ վթարների վրա, որպեսզի վերջնականորեն կատարվի քաղաքում շուրջօրյա ջրամատակարարում ունենալու խոստումը: Բանակցություններ են տարվում ներդրումները ծայրամասային թաղամասերում եւս շարունակելու համար:

### Երեխաների, սահմանափակ կարողություններ ունեցող անձանց պաշտպանություն

■ Շնորհաշատ երեխաների ներուժը բացահայտելու նպատակով հովանավորչական ծրագրերի իրականացում

Ապահովվել է շնորհաշատ երեխաների մասնակցությունը հանրապետական եւ միջազգային մրցումների, փառատոների: Տաղանդավոր երեխաները պարբերաբար ընդգրկվում են համաքաղաքային միջոցառումներում, խրախուսվում քաղաքապետարանի կողմից: Երկու երեխա ուղարկվել է արտերկիր՝ վարպետության դասերի:

■ մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակությանն ուղղված համալիր ծրագրի մշակում եւ միջոցառումների կազմակերպում

Համալիր ծրագիր չկա, սակայն մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության ուղղությամբ տարվել է հստակ քաղաքականություն: Համաքաղաքային միջոցառումներում խրախուսվել է կապանցի տաղանդաշատ մանուկներին ասպարեզ հանելը, նրանց կրթությանն ու զարգացմանը նպաստող տարբեր միջոցառումներ, հանդիպումներ են ձեռնարկվել:

■ երեխաներին վերադարձնել հանգստի իրենց իրավունքը՝ աշխատանքներ տանել վերագործարկելու տարածաշրջանի ամառային ճամբարները Չի իրականացվել

■ հասարակական կարգի պահպանման նպատակով հերթապահ կամավոր ջրկատների ստեղծում

Շրջիկ ջրկատները պայքարել են, ինչոր տեղ վերահսկելի դարձրել եւ կարգուկանոն հաստատել բացօթյա առևտրում, թափառող ընտանի կենդանիների՝ մախկինում տարածված պատկերում:

Իսկ համաքաղաքային բոլոր միջոցառումներում կամավորների խմբերը ներգրավվում են հասարակական կարգի պահպանության գործում:

■ հաշմանդանություն ունեցող անձանց հասարակական կյանքում ներգրավվածության համալիր ծրագրերի իրականացում, թեքահարթակների կառուցում

Առաջին հերթին համայնքապետարանը հաշմանդանություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու համար թեքահարթակներ են կառուցել քաղաքապետարանում՝ դրսից ներս բերող եւ ներսում դեպի «Մեկ պատուհան» ծառայություն:

Կառուցապատողներին տրվող նախագծման թույլտվություններում վերջին 2 տարում օրենքի ուժով, իսկ մինչ այդ քաղաքապետարանի նախաձեռնությամբ պարտադիր պայման է դրվել թեքահարթակների կառուցումը եւ նոր շինությունների մատչելիությունը:

Ապահովվել է հաշմանդանություն ունեցող անձանց մասնակցությունը համաքաղաքային միջոցառումներին, ինչպես նաեւ հանրապետական մրցույթների, միջոցառումների:

Պարբերաբար աջակցություն է տրամադրվել նրանց կենցաղային, առողջապահական, իրավունքների պաշտպանության խնդիրների լուծմանը:

### Կառավարման համակարգի բարելավում

■ Հանրային խորհրդի գործունեության ակտիվացում

Կազմավորվել են քաղաքապետին կից ոչ միայն հանրային, այլեւ գեղարվեստական, երիտասարդական խորհուրդները, որոնք գումարել են նիստեր, հանդես եկել առաջարկներով, նախաձեռնություններով, մասնակցել համաքաղաքային միջոցառումների կազմակերպմանը:

■ քաղաքացիներին մատուցվող ծառայությունների իրականացում մեկ պատուհանի սկզբունքով 2014թ. քաղաքապետարանում ներդրվել է «Մեկ պատուհան» ծառայությունը՝ մատչելի դարձնելով քաղաքացի-քաղաքապետարան կապը, դիմումներին, գրություններին պատասխանելը, ցանկացած խնդրի արձագանքելը. մարդիկ այլեւս կարեւորագույն կարեւոր չեն շրջում, հարցումը կատարում եւ պատասխանը ստանում են մեկ պատուհանից:

■ էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի ներդրում եւ կիրառում քաղաքապետարան-քաղաքացի հարաբերություններում

Համայնքապետարանում ներդրվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն թե՛ քաղաքացիների, թե՛ բոլոր այլ կառույցների հետ: Այժմ քաղաքացիները օգտվում են առցանց ծառայություններից, հետեւում դիմումի ընթացքին, էլեկտրոնային տարբերակով ստանում պատասխան կոնկրետ ժամկետներում:



2 ապրիլի 2015թ., Վազգեն Սարգսյանի կիսանդրու բացումը



2016թ., Ձորքի հիմնանորոգված հեծիպնային կամուրջը



2015թ., Վաչագան գետի մաքրված եւ բարեկարգված հունը

# ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ.

## «Պիտի կարողանաս նյութական եւ սոցիալական խնդիրներից բացի այլ խնդիրներ եւս տեսնել, որոնք ոչ պակաս կարելու են...»

Էջ 1  
զուս հոգուերի համար, թեւ այդ խնդիրների մեծ մասը պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական ոչ բարվոք իրավիճակով, աշխարհաքաղաքական փոփոխություններով, որոնց ջրապտույտի մեջ, բնականաբար, հայտնվել է մեր հանրապետությունը նույնպես:

Կապանյան ներկա ընտրությունները, սակայն, 2012-ի ՏԻՄ ընտրությունների կրկնությունը չեն կարող լինել եւ ոչ մի տեսակետից, թեւ այլ կերպ էր ենթադրվում ամիսներ առաջ: Աշոտ Չայրապետյանի եւ Արտուր Աբայանի մենամարտի փոխարեն հիմա սպասվում է եռակողմ պայքար: ԳՅԿ-ի, ԳՅԴ-ի թեկնածուների կողքին ԲԳԿ թեկնածուի հայտնությունը փոխում է ուժերի հարաբերակցությունը եւ, բնականաբար, թեկնածուների մրցակցության մարտավարությունը:

Վերը շարադրվածի համապատկերի վրա էլ գրույցի հրավիրեցինք Աշոտ Չայրապետյանին՝ ակնկալելով անկեղծ հարցուպատասխան ոչ միայն անցած չորս տարվա կամ ներկա ընթացքի, այլև առաջիկա հինգ տարվա մասին, քանի որ համայնքի ընտրվող ղեկավարի մանդատն ուժի մեջ կլինի հինգ տարի շարունակ, որը, խոստովանենք, քիչ ժամանակ չէ որեւէ համայնքի համար:

\* \* \*

– Պարոն Չայրապետյան, առաջին հայացքից սովորական, բայց մեր կարծիքով կարելու հարց այս օրերի համար. ինչո՞ւ եք ուզում վերստին, եւս հինգ տարով ղեկավարել Կապան համայնքը, չէ՞ որ դժվարին մեր ժամանակներում այնքան էլ դյուրին չէ բազում հիմնախնդիրներ ունեցող քաղաքի կառավարումը:

– Բնականաբար, եթե ժամանակները դժվարին չլինեին, շարունակելու կամ վերստին առաջադրվելու անհրաժեշտությունը չէր լինի, եթե մտածեի, որ չորս տարվա արածն իր բնականոն հունով շարունակվելու է, եւ դեռ՝ առավել հաջող, իմ ընտրվելու իմաստը չէի տեսնի: Իսկ իմ՝ չորս տարի առաջ առաջադրվելու եւ այժմ էլ շարունակելու ցանկանալու պատճառը հենց դա է՝ դժվարին ժամանակները: Այսինքն՝ անհանգիստ եմ այն ամենի շարունակության անպահովման համար, որոնց սկիզբը դրել եմ, ցանկանում եմ դրանք հասցնել այնպիսի վիճակի, որ համոզված լինեմ՝ փոփոխությունները կլինեն անդառնալի:

– Ըստ Ձեզ՝ մարդկային, կազմակերպական, ինտելեկտուալ ի՞նչ որակներ են հարկավոր Կապան համայնքն արժանապատվորեն ղեկավարելու համար:

– Ինչո՞ւ միայն Կապանը, առհասարակ յուրաքանչյուր համայնք ղեկավարելու համար հետեւյալ որակներն են կարելու՞մ առաջին հերթին քո համայնքի կյանքով ապրելու եւ թե՛ քեզ նրա մասնիկը զգալու, թե՛ ամբողջի համար պատասխանատվությունը կրելու ունակությունը: Նաեւ, համայնքն էլ մի մեծ տնտեսություն ու ընտանիք է, կենդանի օրգանիզմ, եւ առաջին հայացքից փոքր թվացող մի հանգամանք կարող է մեծ ազդեցություն ունենալ նրա վրա: Այդ տնտեսությունը ղեկավարելու համապատասխան հատկանիշներ պիտի ունենաս, իսկ որպես ընտանիքի ավագ՝ պիտի կարողանաս լսել անդամներից, նաեւ այն, ինչը քեզ դուր չի գալիս, այսինքն՝ քննադատությունը, եւ կարողանաս տարբերել առողջ քննադատությունը,

պիտի ինքդ լինես հնարավորինս օբյեկտիվ եւ սուբյեկտիվիզմից դուրս՝ յուրայիններ եւ օտարներ չունենաս: Այսինքն՝ պիտի լինես բոլորինը, ու բոլորը պիտի լինեն քոնը:

Դե իսկ ինտելեկտուալ որակները ներառում են մարդու կրթությունը, գիտելիքները, մտավոր ներուժը, եւ այդ ամենն իհարկե կիրառելի եւ կարելու են համայնքի ղեկավարման մեջ, ուստի որոշակի պաշար պիտի ունենաս: Սակայն, որեւէ համայնքի ղեկավար չի կարող ամեն ինչ իմանալ, այ այդտեղ է, որ կարելու է նրա՝ կարծիքներ լսելու ունակությունը, հստակապես եսկան է կոնկրետ տվյալ ոլորտի պատասխանատուների կարծիքը լսելը:

Պիտի կարողանաս նաեւ տարբերակել, դասակարգել համայնքի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, պիտի կարողանաս նյութական եւ սոցիալական խնդիրներից բացի այլ խնդիրներ եւս տեսնել, որոնք ոչ պակաս կարելու են եւ լուծում են պահանջում: Պիտի կարողանաս յուրաքանչյուր խոսքի ձեւակերպման մեջ լինել շատ զգույշ, որովհետեւ դրանով կարող ես կամ ցավ պատճառել քո քաղաքացուն, կամ ճիշտ ասած խոսքով ոգեւորել, հավատ ներշնչել: Բոլորը քեզ են նայում. պետք է լինես օրինակ քո քաղաքացու համար, նա ամեն ինչ տեսնում ու նկատում է: Պիտի ժամանակ առ ժամանակ պարզաբանումներ տաս, եւ այնպես, որ դրանք երկիմաստ չընկալվեն: Պիտի կարողանաս մերժել, բայց հիմնավորեւ մերժումը: Եվ իրոք պիտի լինես ընտանիքի ավագի դերում, համերաշխություն տարածես քո համայնքում, քաղաքացուն անընդհատ հիշեցնես իր պարտականությունների եւ իրավունքների մասին:

– Ձեզ՝ որպես համայնքի ղեկավարի թեկնածու, առաջադրել է ԳՅԿ-ն: Բայց ո՞վ է, նախենաք, Ձեր ընտրողը, ավելի ճիշտ՝ հանրության ո՞ր խավերն են հատկապես Ձեզ համարում իրենց գործընկեր ու իրենց ընտրյալ, որոնք էլ, ըստ քաղաքագիտության կանոնների, կլինեն Ձեր քաղաքական ու սոցիալական հենարանը:

– Սկսենք նրանից, որ քաղաքապետի պաշտոնը քաղաքական պաշտոն է, միեւնույն ժամանակ, մենք չենք ընտրում քաղաքական պաշտոնյա, այլ՝ համայնքի ղեկավար, ընտանիքի ավագ: Եվ անցած իմ չորս տարվա աշխատանքի ապացույցը դա էր, որ համայնքի ղեկավարը չպիտի առաջնորդվի կուսակցական, քաղաքական շահերով: Բայց ինչո՞ւ եմ ասում քաղաքական պաշտոն է. եւ հաջողության, եւ անհաջողության դեպքում ինչ-որ քաղաքական ուժ պետք է վերցնի իր վրա այդ պատասխանատվությունը:

Անցած չորս տարիներն ապացույց են, որ եղել եմ նաեւ ինձ ձայն չտվածների քաղաքապետը, եւ դա ասում եմ շատ վստահ, հույս ունեմ, որ իրենք էլ են դա տեսնում:

Ուստի կարծում եմ հարցն ավելի շատ հակառակ կողմին՝ ընտրողին է ուղղված, մարդիկ իրենք պիտի որոշեն՝ ես իրենց թեկնածուն եմ, թե՞ ոչ, այլապես ես չեմ կարող հասարակությունը բաժանել խավերի եւ որոշել՝ որն է իմը: Ինձ համար բոլորն են, բոլոր խավերի հետ էլ ունեցել եմ շփումներ եւ տարանջատում երբեւէ չեմ ունեցել:

– Գուց գործող քաղաքապետ եք եւ, ինքնըստիմյան, պատասխանատու եք եւ ներկա իրավիճակի, եւ տրված խոստումների, եւ նախկինում ներկայացված ծրագրի համար: Գիտե՞ք, համայնքային որոշ հարթակներում կամ

լսարաններում այսպիսի կարծիք է հնչում երբեմն՝ Աշոտ Չայրապետյանը չի կատարել նախընտրական իր խոստումները: Կուզենայինք այդ առումով Ձեր արձագանքը լսել: Եվ, ըստ Ձեզ, որո՞նք են քաղաքապետարանի չորս տարվա գործունեության գլխավոր արդյունքները:

– Եթե նախընտրական խոստումներ ասելով՝ նկատի ունեն 2012թ. իմ նախընտրական ծրագիրը, հարցի պատասխանը հստակ երեւում է նախընտրական ծրագրի կատարողականով, որը ներկայացնում ենք թերթում: Այսինքն՝ ես առաջինն եմ տվել իմ արած-չարածի պատասխանը, կատարել այդ վերլուծությունը: 37 կետից բաղկացած ծրագրում ասելիք եւ կատարված աշխատանք չկա միայն 6-ում: Եթե կզտենք համայնքի ղեկավարի որեւէ նախընտրական ծրագիր, որի 37 կետից չի կատարվել 6-ը...

Իսկ չորս տարվա գործունեության գլխավոր արդյունք ասելով՝ չեմ ցանկանում կենտրոնանալ այս կամ այն ոլորտում իրականացած աշխատանքների վրա: Ինձ համար այդ արդյունքն առաջին հերթին հետեւյալն է՝ քաղաքապետարանի նշանակությունը հնարավորինս համապատասխանցվել է այն պատկերացումներին, ինչի համար այն կոչված է եղել ի սկզբանե, այս կառույցը ծառայել է նրան, ինչին որ պիտի ծառայի: Որովհետեւ համայնքի ղեկավարները գալու են, գնան, բայց կառույցը պիտի ունենա թե՛ պրոֆեսիոնալ կարգեր, թե՛ գործունեության ճիշտ ուղղվածություն, եւ նրա անելիքները պետք է հնարավորինս քիչ կախման մեջ լինեն համայնքի ղեկավարի ով լինելուց: Եվ հերթական ընտրության արդյունքում համայնքի ղեկավարի փոխվելուց հետո կառույցը պիտի ցնցումների չենթարկվի, այլ արդեն որդեգրած քաղաքականությունը միգուցե առավել մեծ արդյունավետությամբ, միգուցե նոր գործիքակազմով, բայց բնականոն շարունակելով ծառայել մարդկանց:

– Ի՞նչը Ձեզ չի հաջողվել անցած չորս տարում, ի՞նչը չեք կարողացել (ամենատարբեր պատճառներով) իրականացնել, կյանքի կոչել նախընտրական ծրագրից, տրված խոստումներից:

– Թվարկված նախընտրական ծրագրի չիրականացված 6 կետը:

Չասարակական գուգարանների կառուցում. չի արվել, թեւ նախատեսվում է եւ իմ գործունեությունը շարունակելու դեպքում կկառուցվեն:

Քաղաքով անցնող միջպետական ճանապարհին՝ ուսումնական հաստատությունների հարակից տարածքներում, հետիոտնի համար վերգետնյա անցումների կառուցման նպատակահարմարության ուսումնասիրում եւ իրականացում. ուսումնասիրություններ կատարվել են, չի իրականացվել երկու պատճառով. նախ պիտի առաջին հերթին արդիականացվեին Նորոզվեին եղած կամուրջները, որն արվել է եւ շարունակվելու է: Բացի դրանից, հաշվի առնելով 3յուսիս-հարավ մայրուղու կառուցման արդեն հաստատված նախագիծը, որով մայրուղին շրջանցելու է Կապանը, մեր քաղաքի ներսում արդեն այդ ճանապարհահատվածներն այլեւս սման ծանրաբեռնվածություն չեն ունենալու, մեքենաների նման շարժ չի լինելու, ուստի եւ այդ անցումների կարիքն արդեն չի լինի:

Աջակցություն քաղաքի բուժօժանարկներին. որպես այդպիսին, եթե ասենք ընդհանրապես աջակցություն չի եղել, եղել է, օրինակ, հեմոդիալիզի բաժանմունքի հա-

մար բազկաթոռներ են ձեռք բերվել, եւ դա մեր միջնորդությամբ, տարբեր առյուծների ենք դիմել առողջապահական համակարգի հետ կապված հարցերով, որ լուծվել են: Գարջը նաեւ այն է, որ մենք ունենք արդեն նորոգված եւ արդիականացված բժշկական կենտրոն, եւ ինչ-որ լուրջ միջամտությունների կարիք չկա, բայց, օրինակ, այնտեղ կա համակարգչային տոմոգրաֆիայի եւ համապատասխան մասնագետի կարիք, խնդրանքը ներկայացրել ենք, հույս ունենք լուծում կատանա: Եվ, իհարկե, նաեւ մասնագետ կարգերի կարիք կա, որը, կարծում եմ, պետական քաղաքականության շրջանակներում լուծելի հարց է:

Ձուկված եւ հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումներ. մենք սրան ի պատասխան արվածը չենք նշել, քանի որ համարել ենք, որ գլոբալ խնդիր չի լուծվել, բայց քաղաքապետարանը շարունակել է իրականացնել այն, ինչին այս ոլորտում կոչված է: Քանի որ դա պետական քաղաքականության շրջանակներում է լուծվում, մենք կատարել ենք այդ ընտանիքների փաստաթղթերի պատրաստման, միջնորդությունների ներկայացման գործը: Իսկ զուտ առկա բնակարանային պայմանների հետ կապված՝ ինչ հարցով որ այդ ընտանիքները դիմել են՝ նորոգում, կոյուղու հարց, շինանյութ, վթար եւ այլն, իրականացվել է:

Բակերում սպորտային հրապարակների ստեղծում. նորը չենք ստեղծել, վերանորոգվել եւ նորոգվում են եղածները՝ երկաթուղայիններում, Բաղաբերդում, Շահումյան փողոցում մեկը պատրաստվում ենք կապիտալ նորոգել, նախագիծը պատրաստ է, եւ շուտով լրիվ նոր խաղահրապարակ եւ փոքրիկ հանգստանոց գոտի կհիմնվի Ռ.Մինասյան փողոցում:

Երեխաներին վերադարձնել հանգստի իրենց իրավունքը՝ աշխատանքներ տանել վերագործարկելու տարածաշրջանի ամառային ճամբարները:

Ուսումնասիրություններ են կատարվել, եղած ճամբարների՝ անկախ սեփականության ձեւից, տվյալներն ու շենքային պայմաններն են ճշտվել: Այսօր դրանք բոլորը ոչ պիտանի են երեխաների հանգիստը կազմակերպելու համար, անհրաժեշտ են մեծ ներդրումներ: Նույնիսկ այսօր բոլորը չէ, որ կան, քանդված, հողին հավասարեցված էլ կա:

Գարջը թքնարկվել է նաեւ տարածաշրջանում գործող խոշոր կազմակերպությունների հետ, եւ գոնե իրենց աշխատավորների երեխաների եւ հաշմանդամ ու կարիքավոր մանուկների համար փորձ է արվելու վերագործարկել:

– Պաշտոնավարման հենց սկզբից Գուց կարելորեցիք հանրության հետ երկխոսությունը եւ քաղաքապետին կից հասարակական հիմունքով մի քանի խորհուրդ կամ հանձնաժողով ձեւավորեցիք՝ տարբեր կուսակցությունների, հանրության ամենատարբեր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ի՞նչ եք կարծում՝ այդ մոտեցումն անդրադարձ ունեցա՞վ հանրային համերաշխության եւ Կապանի շահերի շուրջ բնակչության համախմբման վրա, թե՞...:

– Այդ՝ ունեցավ, բայց ինքս էլ չեմ համարում դրանք լիովին կայացած, երիտասարդական եւ հանրային խորհուրդները դեռ անելիքներ ունեն: Ինչ վերաբերում է գեղխորհրդին, այն զուտ մասնագիտական ուղղվածություն ունի, եւ նրա գործունեությունը հնարավոր է տեսանելի չի եղել հանրության համար, բայց Կապանի շահերի հետ կապված միանշանակ դերակատարում ունեցել է:

– Չորս տարվա ընթացքում ի՞նչ ծրագրեր են (միջազգային կազմակերպությունների, ԳՅ տնտեսավարող սուբյեկտների կամ պետական բյուջեի միջոցներով) իրականացվել (իրականացվում) Կապանում:

– Գարջի պատասխանը շատ ծավալուն է, եւ ըստ էության հստակ երեւում է մեր քառամյա գործունեության հաշվետվության մեջ, որը եւս հրապարակվում է:

– Կուզենայինք ծանոթանալ համայնքային բյուջեի դիմամիկային անցած չորս տարվա կտրվածքով՝ սկսած

Կարգադրույն ընտանիքների անհրաժեշտությունները

Հարցազրույց բնակիչների հետ

# ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ.

## «Պիտի կարողանաս նյութական եւ սոցիալական խնդիրներից բացի այլ խնդիրներ եւս տեսնել, որոնք ոչ պակաս կարելու են...»

2012-ից՝ եւ սեփական եկամուտների, եւ պետական հատկացումների գծով:

– Վերջին չորս տարում Կապանի համայնքային բյուջեն աճել է 32,8 տոկոսով կամ 1.33 անգամ: Չորս տարում սեփական եկամուտներն աճել են 3,2 տոկոսով:

2012թ. համայնքային բյուջեն եղել է 973 մլն 540 հազար 600 դրամ, հավաքվել է 880 մլն 080 հազար 7 00 դրամ, կատարվել է 90.4 տոկոսով: 2012 թ. սեփական եկամուտներն ըստ պլանի եղել են 382 մլն 288 հազար 400 դրամ, փաստացի հավաքվել է 289 մլն 880 հազար 500 դրամ, կատարվել 75.7 տոկոսով:

2013 թվականին Կապան համայնքի բյուջեում եկամուտների պլանը կազմել է 1 մլրդ 61 մլն դրամ, փաստացի հավաքվել է 1 մլրդ 8 մլն դրամ կամ՝ կատարվել է 97 տոկոսով: Սեփական եկամուտները կազմել են 361 մլն դրամ, հավաքվել է 329 մլն դրամ կամ կատարվել է 91 տոկոսով:

2014 թվականին համայնքային բյուջեն եղել է 1 մլրդ 37 մլն դրամ, հավաքվել է 1 մլրդ 12 մլն դրամ, կատարվել է 97,5 տոկոսով: Սեփական եկամուտները 315 մլն դրամ էին, հավաքվել է 290 մլն դրամ, կատարվել է 92,2 տոկոսով:

2015 թվականին համայնքի բյուջեն եղել է 1 մլրդ 273 մլն դրամ, հավաքվել է 1 մլրդ 256 մլն դրամ, կատարումը՝ 98,6 տոկոս: Սեփական եկամուտները կազմել են 384 մլն դրամ, հավաքվել է 367 մլն դրամ, կատարվել՝ 95,5 տոկոսով:

2016-ին կազմում է 1 մլրդ 297 մլն 002 հազար դրամ, սեփական եկամուտները 394 մլն 629 000 դրամ են, 2016-ի առաջին կիսամյակում բյուջեն կատարվել է նախատեսված պլանի 87 տոկոսով, սեփական եկամուտներ՝ այս տարվա կեսին նախատեսվածի՝ 89 տոկոսով:

– **Իսկ համայնքային բյուջեից ու պետական ծրագրային ներդրումներից զատ ուրիշ ի՞նչ ներդրումներ կամ աջակցություններ են իրականացվել քաղաքում:**

– Միջազգային կազմակերպությունների եւ տեղական դոնորների, որոնցից ամենախոշորները երկու համաբարոյունաբերական ձեռնարկություններն են, կատարած ներդրումները համայնքում չորս տարում կազմում են 1 մլրդ 400 մլն դրամ: Տարբեր ներդրումների եւ ծրագրերի մասին մանրամասն տեղեկատվությունը եւս մեր չորս տարվա հաշվետվության մեջ է, առանձնացնեն մի քանիսը:

«ԶՊՄԿ» ՓԲԸ 540 մլն ներդրմամբ բարեկարգվել է քաղաքի կենտրոնական հրապարակը, կառուցվել են շատրվանները, խմելու ջրի ներքին ցանցի փոփոխման ծրագրում ներդրվել է 8 մլն դոլար Ասիական զարգացման բանկի եւ Եվրոպական զարգացման բանկի կողմից: Քառուսթերփարթ ինքնուրույն համաֆինանսավորմամբ ներդրվել է պլաստիկ աղբի տարանջատման ծրագիրը, քաղաքապետարանում հիմնվել է «Սեկ պատուհան» ծառայությունը, ԶՊՄԿ աջակցությամբ հիմնանորոգվեց Չորքի հետիոտն երթուղի կայանը: Գործընթացը սահմանված է օրենքով, տեխնիկական բնութագրերը տրվում են հայտարարության միջոցով, կան սահմանված չափորոշիչներ եւ գնագոյացման կարգ. մրցույթը բաց է եւ էլեկտրոնային, ամեն ոք, ով ցանկություն ունենալ, կարող էր հայտ ներկայացնել՝ իր մեքենան տրամադրելու համար, տվյալները մեր կայքում հասանելի են, վարձավճարները սիմվոլիկ

կամներին ու մեքենավորներին եք նախապատվություն տալիս:

Տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվեց թոշակառուների համդեպ Ձեր որդեգրած գործելակերպը՝ մեկին ազատում եք, մյուսին՝ պահում, որը, ամեն ինչից բացի, սոցիալական անարդարության տպավորություն է թողնում:

– Կադրային քաղաքականության հարցում վարել ենք շատ նուրբ մոտեցում, այն իմաստով, որ խոշոր փոփոխություններ տեղի չեն ունեցել, ի դեպ, կադրային քաղաքականությունը նաեւ մեր կադրերի վերապատրաստումն է, որ շատ կարելու էր եւ իրականացվել է:

Մենք մեր մեքենավորների հետ բնակվում ենք մի քաղաքում, եւ իմ մեքենավորներից ու բարեկամներից մինչ իմ քաղաքապետ դառնալն էլ աշխատում էին քաղաքապետարանում եւ ենթակառուցվածքում: Իսկ եթե դրանից հետո մեկ-երկու բարեկամ տեղ են գտել, ապա ավելի շատ մարդիկ մեր ընդունած կարգերից այլոց բարեկամներն ու մեքենավորներն են... Իմ բարեկամներից նաեւ ազատվողներ են եղել... Եթե պիտի համարենք, որ այդ մարդիկ Կապանում իրավունք չունեն աշխատանք ունենալ միայն նրա համար, որ ես քաղաքապետ եմ, կարծում եմ՝ սթափ մտածելակերպ չէ:

Ինչ վերաբերում է համայնքային ծառայողներին՝ օրենքով սահմանված տարիքային ցեղք կա, նաեւ թույլտվություն, որի համաձայն բոլոր համայնքային ծառայողները կենսաթոշակի տարիքը լրանալուց հետո աշխատել են եւս 3 ամիս: Ենթակառուցվածքի օժանդակ աշխատողներին, հիմնականում կոմունալում, այո, չենք ազատել, որովհետեւ ամեն մեկը չէ պատրաստ այդտեղ աշխատել: Ինչ վերաբերում է այլ մասնագիտություններին, հաշվի առնելով, որ քաղաքում բարձր գործազրկություն կա, երիտասարդներն աշխատանք չեն գտնում, տարիքը եւ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ավագներն ազատվել են:

Բացառություններ եղել են միայն կառուցների ղեկավարների հանդեպ, դա էլ օրենքով թույլատրելի է, ընդ որում սեսմ՝ մինչ իմ քաղաքապետ դառնալու օրն էլ այդ մարդկանց կենսաթոշակային տարիքը լրացել էր եւ աշխատում էին, մեկ-երկու հոգու տարիքը լրացավ այս ընթացքում, ինչեւէ, այսօր բոլորն էլ ազատվել են:

– **Իշխանավորի անվան շուրջ ասելուսները, բնականաբար, սահման չեն ծանաչում: Ասում են, օրինակ, քաղաքապետի անձնական սեփականություն համարվող մեքենաները բարձր վարձավճարով օգտագործվում են քաղաքապետարանի կամ ենթակա հիմնարկ-ձեռնարկությունների համար:**

– Անձնական սեփականություն համարվող մեքենա մինչ քաղաքապետ դառնալս էլ չեն ունեցել, հիմա էլ չունեն, ունեն հիմնած ընկերություն, որին պատկանող մեքենան ծառայում է քաղաքապետարանին՝ պայմանագրային հիմունքներով: Գործընթացը սահմանված է օրենքով, տեխնիկական բնութագրերը տրվում են հայտարարության միջոցով, կան սահմանված չափորոշիչներ եւ գնագոյացման կարգ. մրցույթը բաց է եւ էլեկտրոնային, ամեն ոք, ով ցանկություն ունենալ, կարող էր հայտ ներկայացնել՝ իր մեքենան տրամադրելու համար, տվյալները մեր կայքում հասանելի են, վարձավճարները սիմվոլիկ

են եւ նման մեքենայի սպասարկման համար ոչ բավարար: Եվ մեր ենթակառուցներից կոմունալն է վարձակալում, բայց ոչ քաղաքապետի անձնակալում:

Որեւէ մեկը չի կարող ժխտել, որ քաղաքապետարանին պետք են ծառայողական մեքենաներ, այս տարիների ընթացքում քաղաքապետարանը նվիրատվության միջոցով ստացել է մեկ «Ֆորդ» մեքենա, կոմունալը՝ 3 մեքենա: Առաջին անհրաժեշտություն ենք համարել դա, եւ ծառայողական մեքենա քաղաքապետարանը ձեռք չի բերել:

– **Որո՞նք են, ըստ Ձեզ, Կապան համայնքի առջեւ ծառայած հիմնախնդիրները, թեւ Ձեր նախընտրական ծրագրից, որ ներկայացվում է թերթի սույն համարում եւս, կարելի է պատկերացում կազմել այդ մասին:**

– Ըստ իս, ամենահրատապ լուծում պահանջող խնդիրը գործազրկության բարձր տոկոսն է, մեծ է հատկապես կանանց գործազրկությունը: Կան այլ խնդիրներ եւս, հատկապես քաղաքաշինական բնույթի. դեռեւս կան չնորոգված վերելակներ, տանիքներ, փողոցներ, բակեր, մայթեր, հեռապատեր եւ այլն:

Տեխնիկական վերագինման կարիք ունի կոմունալ տնտեսությունը՝ աղբատար, ձյուն մաքրող մեքենաների: Քաղաքի համար ռազմավարական եւ հաղորդակցության առումով կարելու կլինի օդանավակայանի գործարկումը:

Կարիք ունենք նաեւ նոր մանկապարտեզի, որի հիմնման աշխատանքները սկսել ենք, բայց դեռ լուրջ ներդրումների կարիք կա այն ավարտելու համար, ունենք նաեւ ոչ տիպային շենքերում գտնվող երկու մանկապարտեզ, նորոգման են ջեռուցման կարիք ունեցող համայնքային հիմնարկներ եւս կան...

Գտնվելով հանքարդյունաբերության ուղղակի ազդեցության տակ՝ կան եւ բնապահպանական խնդիրներ, կանաչ գոտիների ավելացման կարիք:

Շատ են բնակիչների դժգոհությունները նաեւ բնակֆոնդի կառավարման ձեւից՝ համատիրություններից, որոնք այդպես էլ չեն կայանում, եւ այս ոլորտում եւս որեւէ այլընտրանքային համակարգ պետք է ներդնել:

– **Մի քանի հիմնախնդիրների առումով, այնուամենայնիվ, կուզենա՞յինք ավելի կանգամանակից իմանալ Ձեր կարծիք կամ դիրքորոշումը:**

Օրինակ, ինչպե՞ս եք գնահատում Կապանի բնապահպանական դրությունը եւ ինչպե՞ս եք պատկերացնում իրավիճակի մեղմացման ուղղված Ձեր հետագա անելիքները:

– Բնականաբար, եթե կա հանքարդյունաբերություն, չեն կարող չլինել խնդիրներ, եղել են ու կան...

Դա մեր ամենօրյա աշխատանքի կենտրոնում է եւ կարելու է մտահոգություններից մեկը: Տարածաշրջանում գործող խոշոր հանքարդյունաբերական ընկերությունների ղեկավարների հետ մեր մշտական շփումների ընթացքում քննարկվող թեմաներից մեկը դա է, եւ մեզ համար տեսանելի է, որ պատասխանատուներն իրենք նույնպես կարելու են այդ եւ ձգտում մվազեցնել դիսկերը: Միեւնույն ժամանակ, համայնքն իր հերթին նախաձեռնում է իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են համայնքի շրջակա միջավայրի բարելավմանը: Դրանք պար-

բերական ծառատնկումներն են, համաքաղաքային բնապահպանության ծրագրերի շրջանակում քաղաքապետի անձնակալում են, կանաչ տարածքների ավելացումն է, գետերի հունների մաքրումը, բնապահպանական վճարներից հատկացումների նպատակային ծախսումն է: Հետագայում եւս այս գործողությունները պիտի շարունակվեն: Նաեւ վերջերս Կապանը միացավ Եվրոպական նախաձեռնություններից մեկին, որ կոչվում է «Քաղաքապետերի դաշնագիր», կառույցին անդամակցումը պարտավորեցնում է համայնքին արտաբնակների նվազեցում, այլընտրանքային էներգիայի կիրառում: Հեծանիվների ներդրման ծրագիրը եւս ուղղված է դրան եւ, հուսով եմ, դրանցով երթեւեկելու կուլտուրան կմտնի Կապան:

– **Ի՞նչ պետք է անել, որ երիտասարդությունը մնա Կապանում, որ երիտասարդը վաղվա ծրագրերը կապի իր բնօրրանի հետ, որ մայրաքաղաքում ուսանած պատանին ու աղջիկը մեծ մասամբ վերադառնան Կապան:**

– Պետք է շարունակել անել այն, ինչ արվում էր այս չորս տարվա ընթացքում, այսինքն, այո, պետք է նախ աշխատատեղ, բայց նաեւ՝ հստակ քաղաքականություն՝ ուղղված նրանց համար Կապանը գրավիչ դարձնելուն, միջավայր է պետք:

– **Ստու ապագայում ի՞նչ ակնկալիք կարող է ունենալ կապանցի՞ն՝ զբաղվածությամբ խնդրի կարգավորման ոլորտում: Ի՞նչ պի, ի՞նչ իրավիճակ է տիրում համայնքի զբաղվածության ոլորտում:**

– Նախ՝ պաշտոնական տվյալներով հնարավոր չէ վիճակի մասին ճշգրիտ պատկերացում ունենալ, իրական պատկերն օժանդակում, մի կողմից զբաղվածության կենտրոնում գրանցվածները քաղաքի բոլոր գործազուրկները չեն, մյուս կողմից էլ կա բացմված զբաղվածություն: Բայց ընդհանուր պետական վիճակագրական տվյալներով՝ գործազրկության ցուցանիշը Կապանում միջին հանրապետականից երկու անգամ բարձր է:

Դրա մեղմացումն ուղղակիորեն քաղաքապետարանի լիազորությունների շրջանակում չէ, բայց միեւնույն ժամանակ մեզ մտահոգող առաջին խնդիրն է: Իհարկե, մեր գործն է ստեղծել միջավայր, շահագրգռել ներդրողին, մեր արտաքին կապերում, հանդիպումներում փորձում ենք ներկայացնել Կապանում ներդրում անելու գրավչությունը...

Մտո ժամանակներս Կապանում նախատեսվում է նոր պահածոների գործարանի բացումը, քաղաքապետարանն իր հերթին երկու միջազգային ծրագրով նախատեսում է երկու նոր ՀՈԱԿ-ի ստեղծում՝ պլաստիկ թափոնների մշակման համար եւ չրերի արտադրամաս: Բայց, իհարկե, գլոբալ առումով սա հարցի լուծումն չէ...

Երբ խոսում ենք աշխատատեղերի մասին, մարդիկ պատկերացնում են մի խոշոր գործարան: Բայց դա չի լինելու, խորհրդային ժամանակները հետ չեն գալու, այո, ցանկալի է, բայց անիրական է: Նախկին արդյունաբերական Կապանը հնարավոր չէ վերականգնել, չկան արդեն նախկին տնտեսական կապերը, պահանջարկն ու իրացման շուկան, դա կայսրության տնտեսության շրջային մի մասն էր: Պիտի մտածել փոքր բիզնեսներ ստեղծելու մասին՝ հատկապես տուրիզմի, սպասարկման բնագավառի, նաեւ ժամանցի-հանգստի հետ կապված բիզնեսներ, այնպիսի ծառայություններ, որոնց համար մարդիկ այստեղից մայրաքաղաք են հասնում:

– **Ձեզ չի՞ թվում, որ վերջին տասը քսան տարում Կապանի ճարտարապետական դեմքը հետեւողականորեն աղավաղվում է: Ի՞նչ անելիքներ եք տեսնում այդ ուղղությամբ:**

– Այո, ինչքան կարողացել, աղավաղել են, դեռ ավելին՝ այսօր քաղաքապետարանի ամենակարելու խնդիրներից մեկը կա եւ մնում է այն, որ ամեն օր դիմում են մարդիկ, տնտեսավարողներ, որոնք նախկինում սեփականության տարբեր ձեւերով ձեռք են բերել տարածքներ եւ այսօր շինարարություն են ցանկանում անել այդտեղ: Քաղաքապետարանը տարիներ առաջ արտահայտել է իր դիրքորոշումը, եւ այն հստակ է՝ չի կառուցվելու այս քաղաքում մի բան, որն էլ ավելի պիտի աղավաղի նրա ճարտարապետական դեմքը:

Այս տարիներին նաև ապամոնտաժվել, տեղափոխվել են 350-ից ավելի մետաղյա տաղավարներ, 100-ից ավելի փայտանոցներ, եւ գործընթացը շարունակելի է, դա եւս արվում է քաղաքի տեսքը բարելավելու համար:

Երկու դեպքում էլ առաջ ենք բերում քաղաքացիների դժգոհությունը, երբ շինարարության թույլտվություն չենք տալիս եւ նրա տաղավարն ու փայտանոցը քանդում ենք... Բայց սա արվում է նպատակով, որ քաղաքն ունենա հնարավորինս մարզկենտրոնին հարիր տեսք: Բնակիչներից շատերն անտեղյակ են, որ իրենց բակերը, թաղամասերի բնակելի հատվածներին հարող հատվածները, այդ թվում՝ մայթերը, կանգառները, աղբատեղիները նախկինում սեփականության տարբեր իրավունքներով տրված են անձանց, իսկ այսօր այդ վայրերում շինթույլտվություններ չեն տրվում:

Քաղաքի ճարտարապետական տեսքը բարելավելու համար նաև այգիներ են բարեկարգվել, մայթեր, դաշտեր, աղբատեղեր նորոգվել, տեղափոխվել:

– **Ձեր պաշտոնավարման շրջանում, անշուշտ, քաղաքի կենտրոնի բարեկարգման ուղղությամբ տեսանելի, նկատելի աշխատանքներ են կատարվել ու կատարվում, բայց, կարծեք, ծայրամասերը դուրս են մնացել ուշադրությունից, եւ համաչափ զարգացման մասին խոսք լինել չի կարող:** Չե՞ք կարծում, որ այդ մոտեցումը պետք է փոխվի:

– Այո, ինչ-որ տեղ համամիտ եմ, բայց ինչու է այդպես. նախ՝ կենտրոնը միայն կենտրոնի բնակչինը չէ, այն բոլորին է, նաև քաղաք ժամանած հյուրինը, ծայրամասի բնակչինը, ով գալիս է այդտեղ հանգստանալու: Միեւնույն ժամանակ սա մարզկենտրոն է, որի կենտրոնում են տեղակայված շատ վարչական շենքեր, որոնք հյուրեր են ունենում, կենտրոնում են անցկացվում համաքաղաքային միջոցառումները: Եվ բնական է, որ սկսել ենք կենտրոնից, սակայն դա չի նշանակում, որ ծայրամասերում ընդհանրապես բան չի արվել: Ծանապարհներ են բարեկարգվել՝ Շինարարներ, Վահանավանք, Ձորք, Բարաբաթուն են այլն, ամբողջ քաղաքում լուսավորությունն է նախկինի համեմատ 2-3 անգամ ավելացել, լուսավորվել են վայրեր, որոնք նախկինում մթության մեջ էին: Իհարկե, նախատեսվում է հետագայում առավել մեծ ուշադրություն դարձնել ծայրամասերին:

Այսօր չկա մի փողոց, մի բակ, մի մայթ, որի մասին պատկերացում չունենանք, ամեն ինչ ծրագրված է, եւ ժամանակին ճիշտ էր մեր կողմից համայնքի վիճակի մասին անձնագրի կազմումը:

– **Հետաքրքիր մի հարց ենք ուզում պարզել. չորս տարվա ընթացքում Դուք երբեք չանդրադարձաք Ձեր նախորդի՝ Արտուր Աթայանի թողած ժառանգությունը:** Դրա համար երկու պատճառ կարող էիք, ըստ մեզ, ունենալ. կամ շատ լավ ժառանգություն էք ստացել ու չէք ուզում բարձրանալ, կամ պարզապես սովորություն չունեք անցածը փորձել, փակված էջերը վերաթերթել: Ի՞նչ կասեք այդ մասին:

– Թե 2012-ի նախընտրական քարոզարշավի ժամանակ, թե հիմա կրկնում են՝ չեն համարում, որ թողած ժառանգությունը միայն իմ նախորդից է եկել: Դա անկախությունից հետո բոլորիս հայտնի պատճառներով ստեղծված իրավիճակն է, եւ համայնքի յուրաքանչյուր ղեկավար փորձել է արել է քաղաքի համար այն, ինչ կարողացել է: Միեւնույն ժամանակ, ամեն պաշտոնավարման ժամանակահատված արձանագրել է եւ հաջողություններ, եւ անհաջողություններ քաղաքի համար: 2015թ. Կապանին տրված «Լավագույն քաղաքային համայնք» կոչման առիթով էլ ասել եմ, որ դա բոլոր տարիներին կատարված աշխատանքի արդյունք է:

Սակայն, առանց տողատակում ինչ-որ բան ավելին հասկացնելու իմ պաշտոնավարման 100 օրն անփոփոխելիս տված հաշվետվությամբ հրապարակել եմ ընդամենը թվեր, որոնք ոճանց համար զարմանալի են թվացել. փաստ է, որ քաղաքապետարանն իմ պաշտոնավարման առաջին օրվա դրույթային համայնքային բյուջեի գծով ունեցել է 81 մլն դրամ պարտք, եւս 7 մլն դրամ պարտք ունեցել է «Կապան» հիմնա-



Հուլիս 2016թ., Չինաստան, համագործակցության հուշագրի ստորագրում Նիկոլոյի քաղաքապետի հետ



2015թ., Կապանի ամերիկյան անկյուն, ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսի հետ

դրամը, այն դեպքում, երբ բյուջեի ցուցիչը 0 էր, հիմնարարի մնացորդը՝ 0:

Եվ նաև, այդ ժառանգությունը եւ չեն ստացել, դա բոլորին է, նույն հաջողությամբ եւ եմ մի օր աթոռը թողնելու ինձ փոխարինողին, եւ յուրաքանչյուրս պիտի գիտակցենք, որ գալիս են անելիքներով, այլ ոչ թե նախորդներին քննադատելով դիվիդենդներ չափելով:

Այո, նաև փորձելու սովորություն չունեն, ի վերջո, Ա.Աթայանը մեր քաղաքի ղեկավարն է եղել, եւ ճիշտ չեն համարում այլ պահվածքը: Իմ առաջին խորհրդակցության ժամանակ էլ աշխատակիցներից պահանջը եղել է հետևյալը՝ թերացումների մեջ չփորձել մեղադրել նախորդ ղեկավարին:

– **Պարոն Հայրապետյան, կապանյան հանրության մեջ կա շրջանավոր, ավելի ճիշտ՝ իշխող կարծիք, որ 2012 թվականի ՏԻՄ ընտրությունների ժամանակ Ձեր մրցակից՝ Արտուր Աթայանի հետ տեղի ունեցած օպերացիա էր՝ Ձեր ճանապարհը բացելու, հաղթանակն ապահովելու համար:** Այլապես Դուք չէիք կարող հաղթել: Ի՞նչ կասեք այդ մասին: Եվ ընդհանրապես, ի՞նչ տեղի ունեցավ 2012 թվականի կապանյան ընտրություններում: Իրավիճակի ի՞նչ նմանություն կամ տարբերություն էք տեսնում 2012 թվականի նախընտրական վիճակի եւ ներկայիս իրավիճակի միջև:

– Նախ ասեմ, որ տվյալ կարծիքի ձևավորման գործում մեծ նպաստ ունի Ձեր թերթը, այլ ՀԼՄ-ներ, եւ հավանաբար ավելի ստույգ կիմանք, թե Ձեր հրապարակած նյութերում որն է եղել այդ կարծիքի սկզբնաղբյուրը, ով է այն շրջանառության մեջ դրել: Ես կարող եմ հարցին պատասխանել այնքանով, որքանով տեղյակ եմ.

**ՀՀ-ի կուսակցության որոշմամբ:**

– Մրցակիցների մասին ես չեմ որ պետք է ասեմ, այլ ընտրողը: Ինչ վերաբերում է իմ սուբյեկտիվ կարծիքին՝ ոչ թերագնահատում եմ նրանց, ոչ էլ գերագնահատում. եթե գերագնահատել, չէի մասնակցի ընտրապայքարին:

Ա.Աթայանը նախորդ երկու անգամ էլ ինքնառաջադրմամբ գրանցվեց, թեև անհասկանալի էր, որովհետև երկու անգամ էլ ՀՀ-ն հայտարարեց, որ պաշտպանում է նրան: Երրորդ անգամ էլ ինքնառաջադրվեց սահմանված ժամկետի առաջին օրը, առաջադրման վերջին օրը փոխեց կուսակցական առաջադրումով: Այստեղից կարելի է տարբեր հետեւություններ անել, բայց համարում եմ, որ ճիշտ որոշում էր:

Արթուր Մարտիրոսյանը, լինելով կուսակցական կառույցի ղեկավար, ինքնառաջադրվել է: Երկու դեպքերում էլ, սկսած ախտի ենթադրեա, որ կա վատասության պակաս: Առաջին դեպքում Ա.Աթայանն ինքնառաջադրվելով՝ հեռավորություն էր պահում իր կուսակցությունից՝ փորձելով իր համաքաղաքացիներին ցույց տալ, որ դա կուսակցության որոշումը չէ, կամ որպեսզի նրան ձայն տվողները չկաշկանդվեն նրա կուսակցական պատկանելությամբ: Հիմա արդեն, երբ փոխվեց, ենթադրում եմ, որ կուսակցությունը փորձում է վերահսկելի դարձնել այդ պրոցեսները՝ բացառելով ինքնառաջադրում, միեւնույն ժամանակ ընտրական հաջողությունները վերագրել կուսակցությանը:

Ա.Մարտիրոսյանը, ըստ երեւոյթի, փորձ է անում հեռու մնալ կուսակցությունից, որ ժողովրդի կողմից ընկալվի ոչ քաղաքականացված թեկնածու եւ երկու դեպքում էլ փորձ է արվում այն քվեները ստանալ, որոնք չեն կարող իրենց լինել հենց իրենց կուսակցական լինելու պատճառով: Գիշտ չեն համարում, լինելով քաղաքական թիմի անդամ, կախված այդ թիմի ներկա հեղինակությունից, խաղալ նրա դրոշի տակ կամ նրանից դուրս:

– **Դեռեւս օրեր առաջ այն կարծիքն էր շրջանառվում Կապանում, որ հոկտեմբերի 2-ի ՏԻՄ ընտրություններում կրկին Աշոտ Հայրապետյանի եւ Արտուր Աթայանի մենամարտին ենք ակնաստես լինելու:** Մինչդեռ ասպարեզ իջավ ԲՀԿ թեկնածուն, ինչի արդյունքում, կարծեք, նոր իրավիճակ է ստեղծվում համայնքում, ավելի ճիշտ՝ ուժերի նոր հարաբերակցություն է ձևավորվում: Միանշանակ չէ, իհարկե, թե վերադասավորումներն ունենալու կամ ի վնաս որ թեկնածուի կլինեն: Դուք հասցրե՞լ եք վերլուծություններ անել այդ առումով եւ ճշտել քվեների հնարավոր բաշխումը քաղաքական նոր իրավիճակում:

– Առհասարակ, մինչ Ա.Մարտիրոսյանի առաջադրումն էլ չէի ենթադրում, թե ընտրապայքարը կծավալվի իմ եւ Ա.Աթայանի

Հարցազրույց բնակարանային տնտեսության հարցերի և խնդիրների վերաբերյալ

Ասիական բանկի ներկայացուցիչների հետ



## ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ.

# «Պիտի կարողանաս նյութական և սոցիալական խնդիրներից բացի այլ խնդիրներ եւս տեսնել, որոնք ոչ պակաս կարեւոր են...»

Էջ 9 միջև:

Այժմ, ըստ երեւոյթի, փորձ է արվում ապրիլյան պատերազմից հետո հանրային ուշադրությունը հրավիրել այն իրողությունների վրա, որոնք ստեղծվել են հետպատերազմյան շրջանում: Ա.Մարտիրոսյանը, լինելով Արցախյան ազատամարտի մասնակից, մեծ է զննատելի ճանապարհ է անցել բանակաշինության մեջ, բայց այսօր նրա պահանջված լինելը կապել ապրիլյան պատերազմից հետո իրավիճակի հետ, ճիշտ չէն համարում: Այդ իրողությունները ՏԻՄ ընտրությունների վրա չեն կարող ազդեցություն թողնել, եւ միեւնոյն ժամանակ, անկախ համայնքի ընտրված ղեկավարի ու լինելուց, այդ իրողությունները մեծ հաշվով փոփոխության ենթակա չեն:

Այո, վերադասավորումներ կան, առհասարակ երեք թեկնածուի մասնակցությունն այլ է, 2-ինը՝ այլ, եւ կարծում եմ Ա.Մարտիրոսյանի ծայերն իմ հնարավոր ընտրազանգվածի ծայերն են, բայց նույնիսկ այդ պարագայում չեն կարծում, թե դա էականորեն կազդի ընտրության արդյունքի վրա:

– Կապանում տարաբնույթ խոսակցություններ են շրջանառվում ինչ-որ սոցիալոգիկական, հարցախոյզների մասին: Եվ, որքան էլ տարօրինակ է, ամեն մի սոցիալոգիկական հարցախոյզ իր ուրույն արդյունքներն է ցուցանում՝ մյուսներին չնմանվող: Խա՞ղ է այդ ամենը, քարոզչական հնա՞րք է դա, թե՞ փոփոխվող իրավիճակի արտացոլանք:

– Կարող է լինել եւ այս, եւ այն, եւ մյուսը: Բայց կարծում եմ՝ հարցը պիտի ուղղել նրանց, ովքեր դա անում եւ հրապարակում են, իսկ ամեն թեկնածու հնարավոր է, որ դա անում է իր ներքին օգտագործման համար, բայց չի հրապարակում:

– Քիչ առաջ անդրադարձանք Ձեր հնարավոր ընտրազանգվածին, քննարկեցինք հարցը, թե ինչու Ձեր երկու մրցակից իրենց իսկ կուսակցության առաջադրմամբ չեն ելել ընտրապայքարի: Բայց, անկեղծ լինենք, ՀՀ Կապանի կազմակերպությունում եւս, կարծեք, պատշաճ համախմբվածություն չկա Ձեր թեկնածության շուրջ: Իրո՞ք այդ-



2016թ., ՀՀ-ում Եվրոպական միության դեսպան Պյոտր Սվիդալսկուի հետ

պես է, թե՞ մեկ-երկուսի պահվածքով չպետք է եզրակացություններ անել կուսակցության տարածքային կառույցի դիրքորոշման մասին:

– ՀՀ Կապանի շրջանային կառույցը առաջիկա ՏԻՄ ընտրություններում քաղաքացիների եւ ավագանու անդամների հնարավոր թեկնածուների հարցը քննարկել է նախ սկզբնական 21 կազմակերպությունում, եւ քննարկվել է ոչ սիմվոլիկ եւ ոչ ձեւական: ՀՀ Կապանի շրջանային խորհրդի նիստում քննարկվել են սկզբնական կազմակերպություններից ստացված առաջարկները. բոլորն առաջարկել են գործող քաղաքացիների անունը, որը հաստատվել է խորհրդի նիստում միաձայն եւ վերջում հաստատվել ՀՀ Այուրյան տարածքային կազմակերպությունում:

ՏԻՄ ընտրություններն էականորեն տարբերվում են համապետական ընտրություններից այն հանգամանքով, որ այստեղ կան ընկերական, բարեկամական, աշխատանքային հարաբերություններ, եւ եթե կուսակցության 1-2 անդամ կաշկանդված են իրենց գործողություններում, դա չի

նշանակում, թե ՀՀ Կապանի կառույցում քննարկվել է այլ թեկնածուի հարց, եւ համախմբվածություն չկա, այդ պատճառով երեւի ճիշտ է փնտրել այլ կուսակցական կառույցներում:

– Մի հարց եւս, որի վերաբերյալ ցանկացել ենք ծշտել համայնքի ղեկավարի պաշտոնին հավակնող անձանց դիրքորոշումը. նկատի ունենք Եւ Արցախյան քառօրյա պատերազմը, Եւ ոստիկանության զնդի շուրջ հուլիսին տեղի ունեցած միջադեպը:

– Ձեռն կարծում, թե ՏԻՄ ընտրությունների շրջանակը պատեհ առիթ է ընտրաբաժնի խաղալ մարդկանց նուրբ լարերի հետ եւ շոշափել կամ շահարկել այդ թեմաները:

Այդ երեւոյթները չեն կարող ազդեցություն ունենալ ներկա դեպքում եւ մեծ ցանկության պարագայում անգամ չի կարելի դրանք կապել ՏԻՄ ընտրության հետ: Առաջին դեպքում խոսքը երկրի, պետության ամբողջականության, սահմանների պաշտպանության մասին է, 2-րդ դեպքում՝ քաղաքացիական անհնազանդության եւ

օրինազանցության մասին, ի՞նչ պիտի ասի թեկնածուն, որ մեր բանակը հզոր է կամ թու՞յլ, թե՞ «Սասնա ծռերը» լավ են արել կամ վատ...:

Որպես քաղաքացի արել եմ այն, ինչ պիտի անեի ապրիլյան պատերազմի օրերին, իսկ հուլիսյան դեպքերի մասին հայտնել եմ դիրքորոշում, կոչ եմ արել լինել զուսպ եւ հանդես չգալ կապանցու անունից:

– Մեզ հետաքրքրում է նաեւ ՀՀ կառավարության վերաբերմունքը Կապանի տարածաշրջանի ու հատկապես Կապան քաղաքի նկատմամբ: Վերջին տարիներին կառավարությունն ի՞նչ որոշումներ է կայացրել քաղաքին կամ մերձակա գյուղերին առնչվող:

– Ղե, ըստ էության այն, ինչ արվել է քաղաքում պետական միջոցների հաշվին, եղել են ՀՀ կառավարության որոշումներով: Քաղաքին եւ շրջակա գյուղերին վերաբերող ծրագրերից կառանձնացնելիս KFW բանկի միջոցներով սկսված խոշոր ծրագիրը, որը ներդրումներ է նախատեսում Կապանում եւ «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրին հարակից գյուղական համայնքներում:

Խմելու ջրագծերի փոփոխման ծրագիրը եւս խոշորներից էր, եւ վարկի պատասխանատուն էլ ՀՀ կառավարությունն է: Եվ շատ եմ կարելուրում 2013թ. մեծ պայքարի արդյունքում ընդունված որոշումը, որով 2006-ին Պետական գույքի կառավարման վարչությանը հանձնված համայնքային գույքը՝ մեծ թվով տարածքներ, վերադարձվեց համայնքին, ինչպես նաեւ ՔԱԿԳ-ի շենքը համայնքին անհատույց օգտագործման տակ, ծննդաբերականի շենքի վերադարձը հիվանդանոցին:

Ինչպես նաեւ քննարկումների ընթացքում ներկայացրած մեր պահանջով ընդունվեց Հյուսիս-հարավի կառուցման այն տարբերակը, որով միջպետական մարդուին կշրջանցի Կապանը:

– Ձեր դիրքորոշումը համայնքի ավագանու անդամների ընտրության հարցում: Ունե՞ք Ձեր կողմից հովանավորվող, պաշտպանվող, Ձեզ թիմակից, գաղափարակից համարվող թեկնածուների ցուցակ, թե՞ առաջադրված թեկնածուներից յուրաքանչյուրի հանդեպ հավասար վերաբերմունք եք որդեգրել ու ամեն ինչ թողնում եք ընտրողների ազատ կամարտահայտությանը:

– Պատրաստ եմ աշխատել յուրաքանչյուր մարդու հետ, ով ցանկություն ունի քաղաքի հարցերի լուծման գործում ունենալ իր ներդրումը, եւ չորս տարվա իմ աշխատանքն ավագանու եւ նրա անդամների հետ դրա ապացույցն է: Գրեթե բոլոր նիստերը տեսագրվել են, լուսաբանվել եւ ավագանու նիստերը եղել են բաց, թափանցիկ, անկաշկանդ, քննարկվել են շատ խնդրահարույց հարցեր, ավագանին արտահայտել է իր դիրքորոշումը, համայնքի ղեկավարը՝ իր: Պատահել է, որ ընդհանուր հայտարարի չենք եկել, ամեն դեպքում մեր համատեղ աշխատանքը համարում եմ արդյունավետ:

Այս անգամ նույնպես, ընտրվելու դեպքում, պատրաստ եմ աշխատել ավագանու այն կազմի հետ, որը կընտրեն կապանցիները:

– Առաջիկա ընտրությունների անցկացումը, միանշանակ, ընտրատարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործն է, բայց ոչ պակաս անելիք ունի համայնքային իշխանությունը:

Որպես քաղաքացի, կարո՞ղ եք ընտրողներին հավաստել, որ հոկտեմբերի 2-ին Կապանում տեղի կունենան ազատ, արդար, թափանցիկ ընտրություններ:

– Որպես քաղաքացի՝ կարող եմ ասել, որ քաղաքացիտարանը պատշաճորեն իրականացնում է եւ կիրականացնի ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները, գործառնությունները: Ինչ վերաբերում է ազատ, արդար, թափանցիկ ընտրություններին, դա յուրաքանչյուրիս պարտքն է, այդ թվում՝ համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների թեկնածուների, նրանց վստահված անձանց, ընտրական հանձնաժողովների անդամների:

Հարցազրույցը՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

# ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ.

## «Ապագան սկսվում է այսօր...»

### Թեմայով դպրոցական շարադրությունից մինչև համայնքի ղեկավար

#### II Բոլորս գալիս ենք մանկությունից

Մանկությունն անց են կացրել Կապանի Հունան թաղամասում:

Մեկ տարեկանից մինչ օրս ապրում են նույն փողոցում, նույն բակում, նույն տանը:

Վայրը, իհարկե, հարազատ է. դա պայմանավորված է թե՛ մանկության, պատանեկության եւ հետագա հուշերով, թե՛ այն մարդկանցով, ում հետ անց են կացրել այդ տարիները եւ որոնք կյանքիս անբաժանելի մասնիկն են: Մանկությունն ասելիս՝ աչքիս առաջ հայտնվում են պատահիկներ՝ տատս է՝ բակի նստարանին նստած, ում հետ անկախ ինձնից՝ համեմատում են ներկայումս նստած տատիկներին, շենքի հետեւի բակում ֆուտբոլ ու թենիս, ավտոտնակների տանիքներին ծնագոյի խաղալն է, կողքի բարձրահարկի շինարարության ժամանակ հողաթմբերին վերից ցատկեղն ու արնոտված ծնկներով տուն գնալն է, բակի երեխաներով հերթով հեծանիվ վարելն է, քանի որ ոչ բոլորն ունեին...

#### Պարանեկություն, դպրոց

Իհարկե եւ տարիքին բնորոշ չարածճիւղություն կար, եւ չափավորություն, համեստ էի, բայց ոչ խեղճ, ինձ նեղացնել չէի կարող: Տան փոքրն էի, եւ դա էլ անշուշտ ազդել է բնավորությանս վրա. «Երես չեն տվել», բայց ավագ եղբայրներիս համեմատությամբ՝ առավել ազատ ու առանց սահմանափակումների եմ մեծացել: Դա երեւի նաեւ նրանից էր, որ նրանք մորս աշխատավայր դպրոցն էին հաճախում, իսկ ես՝ այլ ...

Քույր չեմ ունեցել, դա նույնպես որոշակիորեն ազդել է վաղ տարիքում աղջիկների հետ չփվելիս՝ կաշկանդվածություն կար, հետո ձերբազատվեցի այդ եւ այլ բարդություններից...

Ես չունեի «Մեծանա» ի՞նչ ես դառնալու» հարցի պատասխանը, մասնագիտության հետ կապված կոնկրետ ցանկություն կամ երազանք երեխա ժամանակիցս չեմ հիշում, երազում էի ճամփորդելու, աշխարհում պտտվելու, շատ բան տեսնելու եւ սովորելու մասին:

Դպրոցական տարիներից ամենատպավորիչն ինձ համար ռուսերենի ավարտական քննության շարադրությունից գերազանց գնահատական ստանալս էր, երբ գերազանցիկ շրջանավարտների փոխարեն առանձնացրին ու դպրոցի առջեւ հատվածներ ընթերցեցին հենց իմ գրածից... Չնայած լավ գիտեի գրականությունը եւ կարող էի գրել կոնկրետ թեմաներով, ընտրել էի ազատ թեմա՝ «Ապագան սկսվում է այսօր...»

Հայրս ինձեներ է, եւ նրա կերպարն ինձ համար՝ օրինակելի, շատ էի հարգում նրա մասնագիտությունը, հաջողությունները: Բացի դրանից, դպրոցում առավել շատ սիրում էի եւ լավ գիտեի ֆիզիկան, մաթեմատիկան: Սրանք են որոշիչ եղել մասնագիտություն ընտրելիս՝ հորս մասնագիտությունն ու իմ հակումները...

Չնայած ինքս ցանկանում էի Մոսկվայում՝ Բաուսմանի անվան համալսարանում սովորել, բայց քանի որ եղբայրներիցս մեկն արդեն դրսում էր սովորում եւ գորակոչվել էր, հայրս չհամաձայնեց, որ ես էլ դուրս գնամ եւ սովորեցի այստեղ:

#### Ումի՞ց եմ սովորել

Դպրոցական տարիներին սիրում էի

կարդալ՝ հատկապես գիշերները, ու կար մի պահ, երբ գեղարվեստական գրականության փոխարեն թեւավոր խոսքեր ու աֆորիզմներ էի կարդում, որոշակի տարիքում դրանք են հետք թողել:

Ուսանելի է եղել հորս կերպարը՝ երիտասարդ տարիքում հաջողությունների հասած լինելը, իր աշխատանքին նվիրվածությունը:

Իսկ մորիցս միգուցե ժառանգել, միգուցե սովորել եմ բոլոր դժվարություններն ինքնամփոփ եւ լուռ տանելը, ինքնուրույն հաղթահարելը... Ժամանակին ես նրան քննադատում էի դրա համար, համաձայն չէի բնավորության այդ գծի հետ ու ինքնագոհություն էի համարում, չէի ուզում, որ նա այդպիսին լինի, հետո տեսա, որ ինքս էլ նման եմ նրան ...

Դպրոցական տարիներին ամառային արձակուրդներս անցել են թե՛ Կավարտում, թե՛ Չափնի գյուղում, որտեղ այդ տարիներին ինձ վրա տպավորություն թողած կերպարներից է նաեւ մորս մորեղբայրը. անչափ բարի եւ հավասարակշռված մարդ էր, եւ միշտ հիացած էի, թե որտեղից գյուղի մարդու մեջ այդքան էթիկա եւ մշակույթ...

#### Մարտական ուղի

Բուհն ավարտելուց հետո 1993-ին ծառայության անցա հայկական բանակում. ինձ չեն զորակոչել, ինքս այդ պահին կամավոր մարտական ճանապարհն ընտրեցի:

Ինստիտուտում ավարտել էի ռազմական ամբիոնը, եւ սկզբում երկու ամսով ուղարկեցին ուսումնական վարժանքների, հետո Կապանի զորամասում հրամանատարի մարտկոցի դասակի հրամանատար էի, 1993-94-ին մասնակցեցի Հորադիզի մարտական գործողություններին:

1994-ի զինադադարից հետո, քանի որ առողջական խնդիրներ ունեի, սեպտեմբերից մինչեւ 1995թ. փետրվարը զորամասում ծառայել եմ որպես ակումբի պետ, այնուհետեւ կրկին շարունակել եմ ծառայությունս՝ որպես զորամասին կից ուսումնական կենտրոնում եւ սերժանտական դպրոցի հրամանատարի տեղակալ՝ դաստիարակչական աշխատանքների գծով եւ զորացրվել 1995-ի դեկտեմբերին:

#### Կին, ընտանիք, հարաբերություններ

Ապագա կնոջս եւս հանդիպեցի Չափնիում, ամուսնացա, երբ 24 տարեկան էի: Կինն ինձ համար շատ վեհ եւ անհասանելի էակ էր, ու գիտակցում էի, թե ինչու. բոլորին նայում էի մորս պիտակով եւ որպես օրինակելի երեւի նախ նրան էի ուզում տեսնել կողակցիս մեջ... Կյանքի ուղեկից ընտրելիս՝ ինձ համար կարեւոր է եղել, որ կինը լինի համեստ, զուսպ, կանացի... Կինը պիտի լինի կին, չձգտի եւ չփորձի նմանվել տղամարդուն: Իսկ ավանդաբար ընդունված եփող-թափող կնոջ կերպարը, չնայած ասեմ, որ մայրս նաեւ շատ լավ տնտեսուհի է, ինձ համար առաջնային չի եղել:

Շատ կարեւորել եմ զույգի՝ միմյանց լուռ հասկանալու հատկանիշը, նաեւ երբեք չեմ համարել, որ կինը պիտի լինի տղամարդու ենթակա, ուղղակի կողմերից յուրաքանչյուրը պիտի ճիշտ հասկանա իր դերը եւ մեկը մյուսի դաշտ չպետք է մտնի:

Չկա այնպիսի հատկանիշ կամ բնավորության գիծ, որ ես առանձնացնեմ եւ ասեմ, որ այսինչ բանը կնոջ մեջ չեմ ընդունում, չընդունելիս ինձ համար հավասարապես եւ տղամարդու, եւ կնոջ մեջ է, այսինքն՝ առհասարակ մարդու: Օրինակ, տանել չեմ կարող փնթիւթները, բայց ոչ

միայն այդ բառի նեղ՝ կենցաղային, այլ լայն իմաստով... Չեմ կարող տանել, երբ մարդ սուտ է խոսում. ես կարող եմ գնահատել, երբ այդ սուտը պարզապես լռելը կամ չտեղեկացնելն է, բայց դա պիտի արդարացված լինի: Չեմ կարող ասել, թե հստակ տարբերում եմ՝ երբ եմ ստում, բայց տարբերում եմ, երբ անկեղծ չեմ...

#### Ջավակներս

Տղամարդը պիտի հարգի ընտանիքն ու ընտանիքի բոլոր անդամներին, պիտի պատասխանատու լինի ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար, դա միայն նյութական եւ կենցաղային հարցերը չեն, այդ պատասխանատվության դաշտը նաեւ ընտանիքի անդամների թերություններն ու սխալներն են: Տղամարդը ոչ մի իրավիճակում իրավունք չունի իրեն կորցնել, որովհետեւ եթե հայր ես, քո երեխաները չպետք է տեսնեն դա:

Հատկապես երեխաների դաստիարակության պատասխանատուն հավասարապես նաեւ տղամարդն է:

Դաստիարակելն օրվա մեջ ինչ-որ կոնկրետ ժամեր չեն, երբ նստում ու երեխեքին խրատ ես կարդում, այլ սեփական օրինակն է. նրանց հետ չվիճան ձեռն է, անկեղծ լինելն է: Դաստիարակելը զավակի մի բան ասելն է. դրա հակառակը թե՛ թույլ չտալն է...

Նրանց լիարժեք ժամանակ չտրամադրելու առումով ինձ մի քիչ մեղավոր եմ զգում, առավել շատ հիմա՝ որդուս համդեպ:

Ձգում եմ, որ մշտապես կարոտում եմ, զգում եմ, որ նրանց հանդեպ այժմ այնքան էլ ճիշտ չեմ հենց միայն այն առումով, որ անգամ իրենց հետ գրուցելիս՝ առօրյա մտքերիցս չեմ կարողանում կտրվել...

Երբ հանրային կյանքով ապրող, պատասխանատու աշխատանք կատարող կամ շատ զբաղված մարդիկ ասում են՝ դա ընտանիքին չի խանգարում կամ անկախ զբաղվածությունից ընտանիքիցս չեմ կտրվել, այդպես չէ, դա պարզապես անհնարին է. կոնկրետ այս աշխատանքում ուզես-չուզես քո վերաբերմունքն է փոխվում ամեն ինչի համդեպ:

Մինչ քաղաքապետ դառնալս ու հիմա, բնականաբար, իմ մեջ փոփոխություններ եղել են, պատկերացումների փոփոխության արդյունքում բնավորությունն էլ է փոխվում, եւ ընտանիքում էլ դա զգում եմ: Փոփոխություններ էլ կան, որ չէի ուզեմա՝ իմ մեջ տեղի ունենային...

#### Ի՞նչ եմ սովորեցնում նրանց

Նախ՝ զավակներիս ուզում եմ անընդհատ ներշնչել, որ վստահեն իրենց ուժերին: Փորձել եմ նաեւ նրանց մեջ դաստիարակել նվիրվածություն. նվիրվելը շատ եմ կարեւորում, առհասարակ՝ ընտանիքի, ընկերոջ, քաղաքի, հայրենիքի, բայց՝ առաջին հերթին՝ ընտանիքի, որովհետեւ հայրենիքն ինձ համար նախաառաջ ընտանիքն է: Դաստիարակությունն ինչ-որ պահի չի սկսվում ու ավարտվում, դա մեր ամենօրյա եւ մշտական շփումն է...

Դուստրերիս մասնագիտության ընտրության հարցում ոչինչ չեմ պարտադրել (երկուսն էլ իրավագիտությունն են ընտրել), անկեղծ ասեմ՝ չեմ ողջունել նրանց ընտրությունը, համամիտ եմ եղել, սկզբում փորձել եմ խառնվել խորհուրդների, օրինակների ձեռով... Դե, ցանկացել եմ իրենց որոշել ու փաստաթղթերը հանձնելուց հետո արդեն միայն քաջալերանք եմ լսել ինձանից...

Ուզում եմ ազատ լինեն, ինքնուրույն լինեն, առհասարակ, ըստ իս՝ մարդու համար ամենակարեւոր արժեքն ազատությունն է: Կատարյալ ազատությունն ինձ համար այն է, երբ դու չունես մտավախություններ, թե այսինչ բանն այնպես չի լինի, թե քեզ չեմ սիրի, հուսախաբ կլինես, թե նպատակիդ չես հասնի, այսինքն՝ ազատությունն այն է, երբ բացի վստահ լինելուց, որ այսինչ բանին կհասնես, չհասնելը եւս քեզ համար ողբերգություն չէ...

#### Լավագույն ժամանակ

Լավագույն համգիստն ինձ համար ընտանիքիս՝ երեք զավակներիս եւ կնոջս հետ խաղաղ ինչ-որ տեղ կամ հենց տանը

ժամանակ անցկացնելն է. պարտադիր չէ, որ խոսենք միմյանց հետ, յուրաքանչյուրը կարող է մի բանով զվաղված լինել, մեկը կարդա, մյուսը հեռուստացույց նայի եւ այլն: Եվ ծնողներիս ներկայությունն է ինձ համար շատ կարեւոր, երբեւէ ընտանիք հասկացությունն առանց իրենց չեմ պատկերացրել, անգամ, երբ ամուսնանալիս առաջարկել եմ առանձին ապրել: Երեխա ժամանակ եռահարկ տան մասին էի երազում եւ երեք եղբայրների ընտանիքներով՝ ծնողներիս հետ մի տան մեջ բնակվելը...

Կամ որոշակի ընտանեկան սովորույթներ. մենք սիրում ենք բոլորս միասին ճաշել, ընթրել, դա ծեսի պես բան է, տոն օրերը պարտադիր միասին անցկացնել... Իսկ տոներից ամենասիրելին ինձ համար զավակներիս ծննդյան օրերն են:

#### Հավատամք

Կյանքի կրեդո ասվածի սահմանումն ինձ համար կամ ապրելու բանաձեւը հետեւյալն է՝ ամեն քո կատարածի մեջ՝ վատի թե լավի, ճիշտ թե սխալի, ամեն ինչի մեջ պետք է թե՛ք տեսնես: Եթե դա դու չես, արածդ թե՛ք նման չէ, ուրեմն թե՛ք ճիշտ չես պահել, շատ ես շեղվել: Ինձ ամեն ինչում իմաստ է պետք, կուրորեն չեմ կարող գնալ դեպի մշակակետը, եթե իմաստը չեմ տեսնում... Ես դրան հասնելու բանաձեւը պիտի ստանամ, նոր քայլ անեմ:

Նաեւ մարդ պետք է դիմազիծ եւ սկզբունքներ ունենա, այսինքն՝ տեսակ ունենա եւ թույլ չտա դրանք աղավաղել՝ ո՛չ իրեն, ո՛չ դիմացինին:

#### Ի՞նչ էի ուզում 2012-ին

Համայնքի ղեկավարի հնարավորությունները ճիշտ էի պատկերացնում, բայց երբեւէ չէի պատկերացնի, որ երբ փորձում ես մի դրական բան անել, եւ դա հաստատ ճիշտ եւ տեղին է, կարող է երկինաստ ընկալվել, ինչպե՞ս կարելի է ոչ միայն չնասանակցել, այլեւ փորձել ներկայացնել այլ լույսի ներքո:

Մտածում էի, որ կհավատամ, որ ես ոչ մի ամձնական կամ այլ խնդիր չունեմ, մտածում էի, որ եթե ես ինքս ինձ հավատում եմ, որ շահ չեմ հետապնդում՝ պիտի հավատան նաեւ այլք: Չէի ասի, թե հուսախաբություններ ունեմ մարդկանցից կամ անձերից, այս ամենը կոնկրետ մարդկանցով չի պայմանավորված. դա բոլորս ենք, մենք ենք, ես եմ, դու ես ...

Երբ պատերազմական տարիներին կանգնած էինք սահմանին, եւ լրիվ այլ արժեքներ էին կարելու, չէի կարող պատկերացնել, թե ինձ կարող են ապացուցել, որ իրոք կեցությունն ավելի կարելու է, քան գիտակցությունը, եւ առաջինով է պայմանավորված երկրորդը: Հիմա էլ, ամեն ինչով հանդերձ, չեմ համարում, որ այդպես պետք է լինի...

Այո՛, ես ռոմանտիկ եմ, բայց իմ պատկերացրած քաղաքով այնքան էլ ռոմանտիկ չեմ, իրական է այն, ինչին որ ուզում եմ հասնել:

Օրինակ, շատերին թվում է, թե Կապանի՝ լավագույն քաղաքի կոչումը միայն ինձ էր պետք. այո՛, դա ինձ համար անչափ կարեւոր էր, բայց, ի վերջո, քաղաքին էր պետք...

#### Ինչպիսի՞ Կապան էի ուզում

Քաղաքին, ճիշտ է, նախաառաջ իբրեւ տան եմ նայում՝ սա լավ է, սա վատ է, սա սարքեմք, սա շտկեմք եւ այլն... Բայց, միեւնույն ժամանակ, քաղաքն ինձ համար, նախաառաջ, մարդիկ են, այն ժամանակ էլ, հիմա էլ ընկալումը նույնն է:

Ես, իհարկե, հասկանում եմ, որ իմ քաղաքի բնակիչներն իրենց դարդից, ցավից, առօրյա հոգսերից չեն կարողանում զլուխները բարձրացնել եւ տեսնել՝ արեւ է դուրս եկել, թե ոչ, բայց ես ուզում եմ թափառել բոլորին մեկամեկ եւ ասել, որ վաղն էլ է նույնը լինելու, մինչեւ չհասկանան, թե այսօրն ինչի վրա են վստահում, ուզում եմ ասել՝ եթե դու զլուխդ չբարձրացնես, ամբողջ կյանքդ է նույնը լինելու...

Ես պատկերացնում էի, որ քաղաքը կարելի է համախմբել, որ համայնքում

Ասորումներ մրցասկզբից առաջ

Ասորումներ մրցակազմից առաջ

# ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. «Ապագան սկսվում է այսօր...» Թեմայով դպրոցական շարադրությունից մինչև համայնքի ղեկավար

Եջ 11 Նիրականում քաղաքական շահեր չեն կարող լինել, ինձ թվում էր, որ ոչ թե ես պիտի ինձ հետ բերեմ ու պարտադրեմ լավը, վեհը, ճաշակովը, գեղեցիկը, այլ դա կա յուրաքանչյուրի մեջ, եւ կարելի է կոչ անել, մի փոքր բզել ու համեստորեն արթնացնել. հիմա էլ նույն կարծիքն եմ...

Ես փորձում էի անել մի բան, որ անդառնալի լինի... Ես պատրաստ էի այս անգամ չառաջադրվել, միայն թե համոզված լինեի, որ 4 տարվա արածը, երբ ինչ-որ բան արդեն փոխվել է, լինելու է անընդհատ դիմա-միկայի մեջ եւ ինքնահոս, ես հիմքերն եմ ափսոսում, իսկ դա մարդկանց պատկերացրած գուտ նյութականն ու կենցաղա-յինը չէ...

Պիտի գեղեցիկը տեսնես ու գնահատես եւ գնահատելու արդյունքում մասնակցես դրա ստեղծմանը, զարգացմանը: Ի վերջո, ամեն պահ չպիտի զբաղվենք բնակիչներին բացատրելով, որ եթե 37 նախագահը չգար էլ Կապան, միեւնույն է՝ գետը պիտի մաքրվեր, որովհետեւ կեղտոտ գետի մոտ չէր կարող այդ գեղեցիկ շատրվանը լինել... Դա քաղաքապետի համար չի արվել, այլ քաղաքի եւ քաղաքացու...

### Էլի ուզում եմ

Ես ուզում էի, որ տանիքն ու վերելակը, ասֆալտն ու ճանապարհը, բակն ու արքը, այս հարցերն իսպառ լուծված լինեին, որ մեր քաղաքում ապրող մարդը վերջապես տեսնի արեւ է դուրս եկել, թե չէ, շատրվանի մեղեդին իր համար հաճելի է, թե չէ, որովհետեւ մեղեդիներն ընտրելիս՝ այնքան երկար ենք մտածել: Ես մտածում էի, թե ով է այնտեղ նստած լինելու, ուզում էի մեղեդին լսելի եւ ցանկալի լինի նաեւ այն մարդու համար, ով ժամանակին երիտասարդ եւ գնահատված է եղել, քաղաքում ներդրում ունի, բայց վաղուց իրեն օտարացած է համարում մեր կյանքից կամ մոռացված ու չգնահատված: Ուզում էի՝ այդ երաժշտությունն ու շատրվանի խաղը տեսնելով՝ տեսնի իրեն, տեսնի նաեւ, որ այս քաղաքում ոչ միայն ամեն ինչ կորած

չէ, ինքը մոռացված չէ, այլ պարտավոր է հետ դառնալ ու մասնակցել նրա կյանքին, արք նետողին ու ծառ ջարդողին նկատողություն անել: Ուզում էի, որ այդ մեղեդիներում ամեն մեկն զգա իրեն, նստարաններին նստած սիրահարները ոչ թե մութ տեղում զբոսնեն, այլ հենց այդ լուսավոր վայրում իրենց երջանիկ զգան: 37-ն էլ եմ ուզում... Ու կհասնենք դրան:

Նույն այդ տարածքի ուռենին շատ են հիշեցնում ու հիշում կարոտախտով, բայց հիմնականում հիշեցնում են խորհրդային տարիների փարթամ ուռենու լուսանկարներով, ես էլ եմ ափսոսում, բայց վերջին տարիներին այդ տեսքը չունեն արդեն... Այն չորանում էր, կեղեւն էլ ցեցն էր մաշել:

Իսկ ինչո՞ւ չեն նկատում տնկված ծառերը, ինչո՞ւ չեն պահպանում, այլ ջանք ու եռանդ չխնայելով՝ տնկիներ են կոտրատում, փորձում պոկել... Չեն ասում, թե քանի որ քաղաքում 1000 ծառ ենք տնկել, այդ մեկը կտրելու իրավունքն ունեինք, բայց նույն մեղադրողները քանի՞ անգամ են գնացել տեսնելու՝ ուռենին փտած էր, թե՞ թարմ, քանի՞ անգամ են գնացել տեսնելու՝ նոր տնկված ծառի տակը խոնավ է, թե՞ չոր... Ինչո՞ւ պետք է շատ հազվադեպ ընտանիքիս հետ զբոսանքի դուրս գալիս՝ ջարդած ծառեր նկարեն ու հիասթափված տուն գնամ... Բայց, միեւնույն է, էլի ենք տնկելու ու ձգտելու աճեցնել:

### ՏԻՄ օրենք, ՏԻՄ լիազորություններ

ՏԻՄ ներկա օրենսդրությունը շատ փոփոխությունների կարիք ունի համայնքների ուժեղացման եւ կայացման համար: Ես բազմիցս այդ ոլորտին առնչվող ամենատարբեր առաջարկներ եմ արել 37 արդարադատության նախարարություն, 37 տարածքային կառավարման նախարարություն, նաեւ 37 սահմանադրության փոփոխությունների քննարկման ժամանակ ՏԻՄ ոլորտին վերաբերող առաջարկների փաթեթ եմ ներկայացրել Հայաստանի համայնքների միության միջոցով, հանդիպումներ, քննարկումներ ունեցել, բայց... Նաեւ հուսախաբ եմ եղել, երբ համայնքի



1 սեպտեմբերի 2016թ., Կապանի N2 երաժշտական դպրոցի սան, բազմաթիվ հանրապետական եւ միջազգային մրցույթների դափնեկիր Արեն Պետրոսյանի հետ՝ Սլովենիայում վարպետության դասերից վերադառնալուց հետո

ընդունած նորմատիվ ակտեր են մերժվել, որոնք իրականում ուղղված են եղել համայնքում ինչ-որ բան փոխելուն եւ նրա օգտին, եւ որոնց հարցում խտրականություն կա մարաքաղաքի եւ մյուս համայնքների միջեւ...

Ես համարում եմ, որ համայնքին պիտի լայն ու շատ լիազորություններ տրվեն բոլոր ոլորտներում, իսկ կրթության եւ առողջապահության ոլորտներում՝ պարտադիր:

Առհասարակ, վերանայման կարիք ունի նաեւ համահարթեցման սկզբունքով համայնքային բյուջեի գոյացումը, որը ոչ միայն իրեն չի արդարացրել, այլեւ խորացրել է շատ խնդիրներ: Եվ որպեսզի համայնքը հնարավորություն ունենա նպատակային շեշտադրումներով հարցեր լուծել, շատ իրավասություններ պետք է տրվեն նրան, եւ ես կողմ եմ, որ համայնքները լի-նեն շատ խոշոր: Սկզբում դժվար է լինելու, բայց արդյունավետությունը երեւալու է: Ես իմ աշխատանքում, օրինակ, ոչ մեկին չեմ ասում, թե դու կապանցի չես, երբ որեւէ խնդրով գալիս է քաղաքապետարան, որովհետեւ ապրում է Կապանով, իրեն համարում է կապանցի, չնայած այլ համայնքում է հաշվառված: Ինչո՞ւ այսքան հոսք կա դեպի Կապան, գալիս են Գորիսից, Քաջարանից, այլ համայնքներից, հարակից գյուղերից, ուրեմն այս քաղաքում են իրենց լավ զգում:

Այդ առաջարկներն ողջունվել են, բայց շոշափելի արդյունք չկա, ասում են՝ համայնքները չունեն դեռ այն մակարդակը, որ վստահեն, բայց դա վիրավորական է՝ սպասել համայնքն ուժեղանա՝ նոր լիազոր

ություններն ընդլայնել, այդ ուժեղացումը չի կարող լինել միայն զանազան ծրագրերով ու սեմինարներով...

Այս ոլորտում դեռ անելիքներ ունենք:

### Ղեկավարը

Չգնացի կարդերի փոփոխման ճանապարհով... Ոմանք ողջունում են, ոմանք չեն ընդունում... Անկեղծորեն եմ ասում, ես հարգում եմ մարդու դիրքորոշումը կամ իմ դիրքերը թուլացրեց, բայց համոզված եմ՝ ուժեղացրեց համայնքս:

Ես շատ եմ հարգում ու կարեւորում այլակարծությունը, կարող եմ մարդու հետ ժամերով բանավիճել, բայց մնալ բարեկամ, ես հարգում եմ մարդու դիրքորոշումը, բայց հիասթափվում եմ, երբ պատկերացում չունենալով՝ փորձում են ոչ միայն գնալ անորոշ ճանապարհով, այլեւ իրենց հետեւից մարդ տանել:

Քաղաքապետի թիմ ասելով՝ ես եմ հասկանում աշխատակազմ, ենթակա կառույցների ղեկավարներ, ես հասկանում եմ հավատարիմ, չասեմ իմ գաղափարներին, իմ առաջարկին հավատարիմ մարդիկ: Այդ մարդը կարող է լինել տանը նստած թռչա-կառուն, էլցանցի աշխատող կամ կոմունալի աշխատակիցը... Թիմն ինձ համար համախոհ մարդիկ են:

Ինչ վերաբերում է զուտ կոլեկտիվ ղեկավարելուն, ես կարգապահություն սիրում եմ, բայց անհմատ ու չափազանցված կարգապահության կողմնակից չեմ: Այսինքն՝ ինձ համար ամենակարեւորն այն է, որ մարդն իր գործին նվիրված լինի, ոչ թե պարտականություններին, դա ուրիշ բան է, այլ՝ գործին... Ես հո ամեն ինչ չզօտեմ, բոլոր հարցերի լուծումը չունեն ու շատ կարեւորում եմ, որ աշխատողը իր սեփական կարծիքն ունենա, տեսակետ ու դիրքորոշում ունենա: Այսինքն՝ եթե մարդը գործին նվիրված է, ճշգրիտ ժամին գալն ու գնալն ինձ համար էական չէ, էականը նրա գործ անելն է, իր կարծիքն ունենալը: Եվ չեմ ուզում, որ աշխատակիցը հարցիս, թե ի՞նչ ես կարծում, պատասխանի՝ «ինչպես կասես, որոշողը դու ես»: Այո, վերջնական որոշողը ղեկավարն է, բայց հուշումներ, տեսակետներ են հարկավոր դրա համար: Պիտի կարողանա անպայման լսել աշխատողին, եթե ես չեմ լսում, ուրեմն նրանից բան չեմ սպասում, միայն հանձնարարական եմ տալիս...

Լավ ղեկավարը նաեւ պիտի կարողանա եղած առաջարկներից ընտրել ոչ միայն լավագույնը, այլեւ իրագործելին: Կարող են լինել իրաշալի գաղափարներ, բայց պիտի վստահ լինես, որ լուծումն ունես:

Նաեւ շատ կարեւոր է, որ կարողանա կոլեկտիվն առողջ պահել, պիտի չթողնես քո ներկայությամբ բամբասեն, պիտի կարողանա ձեռնոց նետել, այսինքն՝ աշխատողը ձգտի ապացուցել, որ այսինչ բանը կարող է իրագործել...

Ինչ վերաբերում է հետագա անելիքին, բնականաբար, արդեն փորձ ունեցո-



22 մայիսի 2016թ., Կապանի N8 ՆՈՒՅ-ի Կավարի մասնաճյուղում

# Կապան, 2013, 2014, 2015, 2016 Թվականներ

ԶՊՄԿ-ի աջակցությամբ էջ 4 հիմնանորոգվեց Կապանի Չորք թաղամասի՝ հետիոտն երթուղու-թյան համար նախատեսված վերգետնյա կամուրջը՝ 13 մլն 43 հազար դրամ, որը տարիներ շարունակ քարուքանդ էր վտանգավոր վիճակում էր եւ թաղամասի բնակիչների բողոքների կիզակետում: Կոմունալ ծառայության կողմից բարելավվել է նաեւ կամրջի շրջակա տարածքը:

Նորոգվել է Երկաթուղայիններ թաղամասի խաղահրապարակը, սկսվել են Ռաֆայել Մինասյան փողոցում նոր խաղահրապարակի հիմնման աշխատանքները Ռոստելեկոմի եւ համայնքապետարանի համաֆինանսավորմամբ, լուսավորվել է Բաղաբերդ թաղամասի խաղահրապարակը, նույն թաղամասում նորոգվում է խաղադաշտ:

2013 թվականին հաջողվեց դեռեւս 2006-ին պետական գույքի կառավարմանը հանձնված համայնքային 15 տարածք՝ հիմնականում՝ գրադարան, ակումբ, մանկապարտեզ, վերադարձնել համայնքին, նաեւ 6000 քմ հողատարածք երկաթգծի կայարանի տարածքից:

Իսկ Կապանի քաղաքացիական ակտերի գրանցման գրասենյակի շենքը, որ կրկին հանձնվել էր պետական գույքի կառավարման վարչությանը, 2013-ին անժամկետ հանձնվեց համայնքին՝ անհատույց օգտագործման համար:

Բազմաթիվ գրություններով եւ միջնորդություններով հաջողվել է Կապանի հիվանդանոցի ծննդաբերական մասնաշենքը վերադարձնել բժշկական կենտրոնի հաշվեկշիռին:

Գազիֆիկացվել է Վաչագան թաղամասը, որի համար դոնոր կազմակերպության միջոցներով դեռեւս 2010թ. կառուցվել էր գազատար, սակայն տեխնիկական թերությունների պատճառով գազը մինչեւ թաղամաս չէր հասել: Աշխատանքները երեք տարի հետո ավարտին հասցվեցին «Դավիթ-Բեկ» հայրենակցական միության ֆինանսավորմամբ: Գազը բաժանորդին հասցնելու նպատակով ԻՖԱԴ-ի կողմից իրականացվեցին աշխատանքներ՝ 10 մլն դրամի չափով:

## ԿՈՍՏՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բարելավվել է քաղաքի լուսավորության համակարգը, 4 տարում մոտ 670 մեծ ու փոքր լուսատուներ են տեղադրվել քաղաքում, նոր լուսավորություն անցկացվել կամ վերականգնվել որոշ թաղամասերում: Լուսավորվել է քաղաք մտնող թունելը, Մ 2 միջպետական մայրուղին, որտեղ 250 լուսատու է տեղադրվել: Նոր մեծ լուսատուներ են տեղադրվել Շահումյան, Երկաթուղայինների, Ռ.Մինասյան փողոցներում, Չորք, Հալիծոր, Բաղաբերդ թաղամասերում եւ Դավիթ-Բեկ հրապարակում:

Հայաստանի վերկանգնողական էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի հետ իրականացվել է փողոցային լուսավորության համակարգի վերականգնման ծրագիրը՝ ավելի քան 27 մլն դրամ ներդրումով, էներգախնայող համակարգի շնորհիվ հաջողվել է ապահովել շուրջ 38,3% խնայողություն:

Մոտ 3 մլն դրամի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Գ.Նժդեհի հանգստյան գոտու բաց լողավազանում, տեղադրվել լուսատուներ:

Հիմնանորոգվել է 13, մաքրվել 16 սեւավատար:

Կառուցվել է 12 նոր աղբատեղի, նորոգվել 6-ը:

Տեղադրվել է կենցաղային աղբի համար 41 նոր աղբաման, նաեւ՝ 90 աղբա-

ման՝ պլաստիկ շէերի համար:

«Ուրբան կայուն զարգացման» հիմնադրամի հետ համատեղ Եվրոպական միությանը ներկայացվել է ծրագիր համայնքում պլաստիկ աղբի վերամշակման եւ զբոսաշրջության զարգացման վերաբերյալ: /2016-ին ծրագիրը հաղթել է մրցույթի 2 փուլերում, այժմ գտնվում է պայմանագրի կնքման փուլում/: Երկամյա ծրագրի իրականացման համար նախատեսվում է ստեղծել համայնքային նոր հիմնարկ, որը ծրագրի ավարտից հետո էլ կշարունակի աշխատել:

Քաղաքում կոմունալ ծառայության կողմից պարբերաբար իրականացվում են սաննաքրման, հանրային տարածքների բարելավման, ծառերի էտման ու ծառատնկման, նոր լուսատուների, նստարանների տեղադրման աշխատանքներ:

«Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի եւ քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի ուժերով քաղաքում իրականացվում են անկանոն տեղադրված փայտանցքների, մետաղյա տաղավարների ու կրպակների ապամոնտաժման, տեղափոխման աշխատանքներ, մասնավորապես, արդեն ապամոնտաժվել են 300-ից ավելի մետաղյա տաղավարներ ու կրպակներ, ինչպես նաեւ Մ.Պապյան եւ Հ.Ավետիսյան փողոցներում շենքերի հարեւանությամբ անկանոն տեղադրված փայտանցքները՝ վերականգնելով տարածքների նախկին տեսքը, խաղալու պայմաններ ստեղծելով մանուկների համար: Չնայած շատ դեպքերում գործընթացը հարուցում է բնակիչների բողոքները, սակայն անհնար է չնկատել դրա ազդեցությունը քաղաքի եւ բակերի արտաքին տեսքի վրա:

Մեկ այլ՝ Կապանում տարիներ առաջ տարածված տեսարանի եւս հնարավորինս վերջ է դրվել: Զբոսադիմերում, աղբամանների մոտ ու քաղաքի մայթերին ու փողոցներում ամենուր հանդիպում էին թափառող ընտանի կենդանիներ, աղտոտում շրջակայքը, փչացնում կանաչ տարածքները:

Քաղաքապետարանի կողմից սկսվեց երեւոյթի դեմ համալիր պայքար, անասնաբուժական տեսչության հետ համատեղ ճշտվել է քաղաքի որջ տարածքում բնակիչների կողմից պահվող ընտանի կենդանիների բազան, դրոշմակնքվել է 1200 կենդանի, նրանց տերերի շրջանում բացատրական աշխատանք է տարվել կենդանիների հատուկ վայրերում արածեցնելու, քաղաքի տարածք բաց չթողնելու մասին: Օրինախախտները տուգանվել են, եւ աստիճանաբար այս պայքարն արդյունք է տվել: Այժմ արդեն քաղաքում բացակայում է թափառող կովերի, ավանակների, ձիերի՝ զբոսադիմերում, աղբամաններում սնվելու, կանաչ տարածքները վնասելու պատկերը: Իսկ երբեմն հանդիպողներն էլ անմիջապես բռնվում, պահվում են մինչ տերերի հայտնաբերումը:

2013թ. գրանցվել է անասուններն առանց հսկողության թողնելու 10 դեպք, 140 հազար դրամ տուգանք է վճարվել համայնքային բյուջե: 2014թ.՝ 2 դեպք՝ 2 0 000 դրամ տուգանքով:

2015 ու 2016 թվերին արդեն դեպքեր չեն գրանցվել, առանձին դեպքերում տերերն առաջին անգամ զգուշացվել են:

Բնակիչների խնդրանքով Կապանում գործարկվել է միկրոավտոբուսային երկու նոր երթուղի՝ N9 եւ N10, որոնք սպասարկում են «Բաղաբերդ» թաղամասի N2 ՆՈՒԴ-ի հարակից տարածքից մինչեւ «ԴՓՄԿ» ՓԲԸ-ի վարչական շենք եւ Շինարարների թաղամասի N2 բազմաբնակարան բնակելի շենքի հարակից հրապարակից մինչեւ Գործարանային փողոցի սկզբնամաս:

Գործարկվել են նաեւ դեպի Բարաբաթուն եւ Բաղաբերդ տանող երթուղիները:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՍՊՈՐՏ

Մշտապես ուշադրության կենտրոնում է եղել համայնքի մարզական, կրթական, մշակութային կյանքը. պարբերաբար կազմակերպվել են միջոցառումներ, հավուր պատշաճի մշակում են պետական եւ հոգեւոր տոները, հովանավորվում եւ ապահովվում համայնքից մարզիկների եւ մշակութային խմբերի մասնակցությունը հանրապետական եւ այլ միջոցառումների:

Կապանում օրակարգային է եղել կենտրոնում նոր մանկապարտեզ ունենալը. Աշտուվան թաղամասի, ինչպես նաեւ Լեռնագործներ եւ Դավիթ Բեկ փողոցների մոտ 200 երեխայի համար նոր ՆՈՒԴ ունենալու նպատակով սկսվել է Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի մասնաշենքերից մեկի վերակառուցումը՝ որպես նախադպրոցական ուսումնական հաստատության շենք: Դրա համար 200 մլն դրամից ավելի ներդրում է անհրաժեշտ, համայնքը մինչ այժմ ներդրել է 25 մլն դրամ:

Վերջին 4 տարում նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների թիվն ավելացել է 144-ով՝ հասնելով 1416-ից 1560-ի:

30-ով աճել է արտադպրոցական ուսաստատությունների երեխաների թիվը՝ դառնալով 1530:

Վճարները թե՛ արտադպրոցական ուսումնական հաստատություններում, թե՛ մանկապարտեզներում չեն ավելացել, չնայած 4 տարում մեկ երեխայի պահպանման ամսական միջին ծախսը եղել է 14000 դրամ, 2016-ին դարձել է 18 000 դրամ:

Ամեն տարի մոտ 100 երեխա օգտվում է մանկապարտեզների վարձի մասնակի կամ լրիվ զեղչից:

Չորս տարում ՆՈՒԴ-երում կատարվել է մոտ 158 մլն դրամի նորոգման եւ գույքով համալրման աշխատանքներ:

Արտադպրոցական ուսումնական հաստատություններում եւ մշակութային օջախներում, ակունքազարդարանային միավորումում կատարվել է նորոգման եւ գույքով համալրման մոտ 229 մլն դրամի աշխատանք:

56 մլն դրամով /պետբյուջե/ հիմնանորոգվել է թիվ 1 երաժշտականը, լուծվել է նաեւ ջեռուցման հարցը, մինչ այդ փոխվել էին դպրոցի դռներն ու պատուհանները, համայնքային բյուջեի եւ «Քաունթերփաթ ինթերնեշնլի» համամերթրմամբ 2 մլն 700 հազ. դրամ գումարով հատկացվել էին երաժշտական գործիքներ:

Շուտով կսկսվի արվեստի մանկական դպրոցի հիմնանորոգումը Հայաստանի զարգացման հիմնադրամի 85 մլն դրամ ներդրմամբ, որի 10 տոկոս համաներդրումն արդեն համայնքը կատարել է, դպրոցը նաեւ կջեռուցվի:

Դավիթ Համբարձումյանի անվան մարզադպրոցի օրախնդիր դարձած՝ քանդված հատակը նորոգվում է պետբյուջեի 40 մլն դրամ հատկացումով:

Կահավորվել է թիվ 6 ՆՈՒԴ-ի խոհանոցը, նորոգվել նույն ՆՈՒԴ-ի մի խմբասենյակ եւ ապահովվել կահույքով:

Նորոգման աշխատանքներ են իրականացվել թիվ 13 ՆՈՒԴ-ում՝ 32 մլն դրամ պետբյուջեի հատկացումով:

Համայնքի միջոցներով նորոգվել է թիվ 4 մանկապարտեզի տանիքը՝ 9,8 մլն դրամ, իսկ Կապանի կոմբինատի միջոցներով կառուցվել կցակառույց, նորոգվել դահլիճը եւ խմբասենյակը՝ 14,4 մլն դրամ:

«Վորլդ վիժն» կազմակերպության եւ համայնքային բյուջեի միջոցներով նորոգվել է Բաղաբերդ թաղամասի թիվ 2 ՆՈՒԴ-ի մեկ խմբասենյակ:

4,4 մլն դրամի նորոգման աշխատանք է կատարվել «Կապանի թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ում՝ որպես 2014թ. նոյեմբերին քաղաքի բարձր ճնշման խողովակաշարի վթարի հետևանքով հասցված վնասի փոխհատուցում:

■ Որպես տուրվեցնիա պետբյուջեից համայնքին տրամադրված 4 մլն դրամով վերանորոգվեցին թիվ 8 ՆՈՒԴ-ի Կավարի մասնաճյուղի սանհանգույցները: «Դանդի ՓՄԿ» /այժմ՝ Կապանի լեռնա-

հարստացման կոմբինատ/ աջակցությամբ՝ 14.5 մլն դրամ, փոխվել են Կապանի թիվ 7 ՆՈՒԴ-ի բոլոր պատուհանները:

Մի շարք ՆՈՒԴ-երում եւ ՄՊՍԿ-ում կատարվել են սանհանգույցների, խոհանոցային բլոկի, խմբասենյակների, տանիքի նորոգման աշխատանքներ: Նորոգման եւ վերագինման աշխատանքներ են կատարվել բոլոր ՆՈՒԴ-երում:

Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղի հետ միասին կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ ՆՈՒԴ-երի դաստիարակների համար:

Կապանի թիվ 6 ՆՈՒԴ-ի դաստիարակ էմիլյա Քոչարյանը հաղթող է ճանաչվել 2014թ. «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի «Բնության կրտսեր բարեկամ դաստիարակելու համար» անվանակարգում:

Հայ առաքելական եկեղեցու կողմից հայտարարված մրցույթում լավագույն տնօրեն է ճանաչվել Կապանի թիվ 6 ՆՈՒԴ-ի տնօրեն Բելլա Կոստանյանը, լավագույն դաստիարակ՝ նույն ՆՈՒԴ-ի դաստիարակ Մարգո Գրիգորյանը:

■ Կապանի գեղարվեստի դպրոցը Չեխիայի Տորուն քաղաքում կայացած «Միշտ կանաչ, միշտ կապույտ» մրցույթում արժանացել է «Լավագույն դպրոց» կոչմանը:

Ամեն տարի քաղաքապետարանը ապահովել է արտադպրոցական կրթօջախների սաների մասնակցությունը Գյումրու «Վերածնունդ» միջազգային փառատոնին, եւ նրանք միշտ վերադարձել են տարբեր մրցանակներով: Օրինակ, 2015-ին Կապանի արվեստի մանկական դպրոցի «Սկնիկ հարսնացուն» երաժշտական թատերախումբը եւ թիվ 2 երաժշտական դպրոցի սան Արեն Պետրոսյանը, յուրաքանչյուրը մրցութային իր անվանակարգում, 1-ին տեղ են գրավել: 2016-ին Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցից Արտյոմ Սարգսյանն արժանացել է առաջին կարգի դիպլոմի եւ այլն:

Ի դեպ, այս ամռանը կապանցի շնորհաշատ Արեն Պետրոսյանը քաղաքապետարանի նախաձեռնությամբ եւ ԶՊՄԿ աջակցությամբ գործուղվել է Սլովենիա՝ վարպետաց դասերի:

Քաղաքապետարանը մասնակցել է աջակցել է «Կապանի նորարար ուսուցիչ» մրցույթի անցկացմանը, հաղթողներին հանձնել պատվոգրեր եւ դրամական պարգև:

ԱՄՆ «Davis» հիմնադրամի կողմից ՄՊՍԿ-ում 2014-ի ամռանը իրականացվել է կրթական ծրագիր:

Գեղարվեստի դպրոցի սաներն ամեն տարի մասնակցում են «Մեկ դար եւ ավելի...» մրցույթին, վերադառնում մրցանակներով:

■ Կապանն ամեն տարի մասնակցում է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական ՆՈՒԴ» մրցույթներին, անցկացնում դրանց համայնքային փուլը:

ՆՈՒԴ-երի եւ դպրոցների միջեւ ամեն տարի անց են կացվում սպորտախմբիկներ, տարբեր մարզաձևերից մրցումներ, հաղթողները ստանում են պարգևներ եւ մրցանակներ:

2013թ. եւ 2016թ. ամռանը Կապանի մշակույթի կենտրոնում կազմակերպվեց «Ամառային հանգիստ Կապան» ճամբարը, որին համապատասխանաբար մասնակցել է 250 եւ 200 երեխա: Մանուկները հնարավորություն են ունեցել մեկ անգամ սնվել ճամբարում, այցելել տարբեր մշակութային եւ ժամանցի վայրեր, տարբեր մրցույթներով եւ միջոցառումներով կազմակերպվել է նրանց առօրյան:

Քաղաքապետարանն ամեն ամռան ապահովել է նաեւ հանրապետության ճամբարներում հանգստանալու մեկնող սոցիալապես անապահով երեխաների տեղափոխումն ու տունդարձը:

Կապանցի արվեստ Լեւոն Աղասյանը 2014-ին դարձավ Եվրոպայի պատանիների չեմպիոն, իսկ 2016-ին՝ Բալկանյան երկրների առաջնության հաղթող: Լեւոն Աղասյանն անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին կապանցին է, որ այս տարի մասնակցեց ամառային օլիմպիա-

Նախընտրված

# Կապան, 2013, 2014, 2015, 2016 Թվականներ

Էջ 13 Կան խաղերին: Դեռ Լեւոն Աղասյանն էլ 2015-ի ամռանը ընդունեց Կապան հասած վեցերորդ ամառային Համահայկական խաղերի ջախը, որի առիթով կազմակերպվել էր հանդիսավոր արարողություն: Անմախաղեպ էր վեցերորդ համահայկական ամառային խաղերին կապանցիների մասնակցության արդյունքը: Այսօր մարզկենտրոնից 22 մարզիկ մասնակցում էր միայն թեթև աթլետիկայի մարզածետերի մրցումներին, եւ նրանք վերադարձան յոթ մեդալով, արժանանալով գնահատանքի եւ մեծարման: Համահայկական խաղերին մասնակցելու բոլոր տարիների ընթացքում սա Կապան եկած մեդալների ամենամեծ քանակն է:

Այս տարիներին քաղաքապետարանը մշտապես ապահովել է կապանցի մարզիկների մասնակցությունը հանրապետական եւ միջազգային մրցումների, մշտապես մրցանակներով եւ տուն վերադարձել հատկապես աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցի սաները: Հաջողությամբ հանդես են եկել նաեւ կապանցի մարմնամարզուհիները:

### ՄԱՆԱԿՈՒՅՑ

Կապանում պատշաճորեն՝ եւ համաքաղաքային միջոցառումներով եւ ենթակառուցվածքում առանձին, նշվել են բոլոր հոգեւոր եւ պետական, ազգային տոները, մշտապես կազմակերպվում համերգներ, մրցույթներ, ցերեկույթներ, մեծարման երեկոներ եւ այլն:

Համայնքապետարանը ձգտել է այս միջոցառումներում շեշտը դնել տեղի հատկապես մարզիկների եւ շնորհաշատ անհատների վրա, ընդգրկել կապանցի ստեղծագործողներին, նաեւ քաղաքի երաժշտական եւ արվեստի դպրոցների աչքի ընկնող, տարբեր մրցույթներում հաղթած տղաքանդակոր մանուկներին եւ պատանդներին:

Այս ընթացքում Կապանի մշակույթի կենտրոնի համար ձեռք է բերվել ծայրային տեխնիկա՝ 4 մլն դրամի, կազմակերպվող միջոցառումները պատշաճ կարգով իրականացնելու համար ձեռք են բերվել տարբեր սարքավորումներ եւ գույք:

- Կազմավորվել է մշակույթի կենտրոնի «Կապան» էստրադային համույթը:
- Կազմակերպվել է Վաչե Եփրեմյանի նվիրված գրական հուշ-երեկո:
- Անց են կացվել եւ Ռոզա Քարամյանի, Մարտուն Ասայանի գրքերի շնորհանդեսները:
- Նշվել է կապանցի հայտնի ֆուտբոլիստ Գրիշա Համբարձումյանի 80-ամյակը: Նշվել է Հ. Ավետիսյանի ծննդյան 100-ամյակը
- Հայտնի երաժիշտ Լեւոն Օզանեզովը համերգ է ունեցել թիվ 1 երաժշտական դպրոցում:
- Կազմակերպվել է նաեւ Գառնիկ Խաչատրյանի նվիրված հուշ-երեկո, Ռուզան Ավանեսյանի «Օրերս հին ու անցած» խորագրով ստեղծագործական երեկոն:
- Հովանավորվել է Սմբատ Ստեփանյանի «Կապան. ուրվագծեր երկրամասի պատմության» գրքի տպագրությունն ու շնորհանդեսը:
- Երգչախմբային արվեստի միջազգային օրվան նվիրված համերգ է կազմակերպվել Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:
- Քաղաքապետարանն աջակցել է ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպված «Ամերիկյան մշակութային շրջագայություն-2015» ծրագրի իրա-

կանացմանը՝ համերգային ծրագիր, ֆիլմերի ցուցադրություն:

- «Կապան» բարեգործական հիմնադրամի միջոցներով մասնակի նորոգվել է Ծնավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանը՝ ավելի քան 8,5 մլն դրամ, նաեւ թարմացվել է գույքը:
- «Ընտանիքի միջազգային օրը», Հաշմանդանների շախերի պաշտպանության օրը կազմակերպվել է այց կապանցի ընտանիքներ:
- Ակունքագրադարանային միավորման գրադարանավարները մասնակցել են ամերիկյան համալսարանի Փափայանի անվան գրադարանում վերապատրաստման դասընթացներին: 2015թ. Կապանում տեղադրվեց մեր անկախության հիմնադիրներից մեկի՝ ՀՀ ռազմական, քաղաքական-հասարակական գործիչ, ՀՀ ազգային հերոս Վազգեն Սարգսյանի կիսանդին:

Մեծ հանդիսավորությամբ նշվեց նաեւ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակը: 2016-ին Կապանում նշվեց «Եվրոպայի օրը»:

Կապանը հավուր պատշաճի նշեց մեր ազգի պատմության մեջ ամենացավոտ էջի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Օրեր շարունակ քաղաքում ամենատարբեր ձեռնարկներով հոգեկոչվեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակը:

■ Նախ ձեւավորվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող համայնքային հանձնաժողով, որը կազմեց համայնքային միջոցառումների ծրագիրն ու հետեւեց դրա իրականացմանը:

Միջոցառումների շրջանակներում քաղաքում ձեւավորվեցին 100 հոգանոց կանանց եւ 100 հոգանոց մանուկների երգչախմբերը, որոնք մասնակցեցին միջոցառումներին:

Ի դեպ, քաղաքապետարանի հիմնածայր երգչախմբերի ելույթները հետագայում եւս քաղաքային այլ տոների եւ միջոցառումների բաղադրիչն են կազմում եւ իրենց կատարողական արվեստով արժանանում հանդիսատեսի ջերմ ընդունելությանը:

100-ամյակի շրջանակներում կազմակերպվեց գթության քույր եւ բարեգործ Վարսենիկ Մելիք-Ստեփանյանի անթաղ աճյուղի հուղարկավորությունն Առաջածոր գյուղում:

600-ից ավելի ծառ տնկվեց Մ-2 միջպետական մայրուղու երկայնքով, բացվեցին ցուցահանդեսներ:

Դպրոցականների համար հայտարարվեցին թեմատիկ մրցույթներ, հաղթողները ստացան մրցանակներ: Ապրիլի 24-ին Բաղաբուրջի հուշահամալիրում կատարվեց նոր հուշարձանի հիմնարկեք, որով կհավերժացվի Մեծ եղեռնի ճանաչման գործում ներդրում ունեցած անձանց հիշատակը:

Իսկ նույն օրը երեկոյան Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում տեղի ունեցավ «Ոգեկոչման երեկո»՝ նվիրված Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին:

- 2015թ. դեկտեմբերին բացվեց տարածաշրջանում առաջին էլեկտրոնային գրադարանը: Դրա հիմնադրման աշխատանքները մեկնարկել էին 2013թ., շինարարությունն սկսվել էր 2014թ.: Ծրագրի ընդհանուր արժեքը մոտ 76,3 մլն դրամ է. այն իրականացվել է համայնքային բյուջեի, «Դանդի Փրիշու Մեթալս Կապան» ՓԲԸ, «Քաունթերփարթ Ինթերնեշնլ» կազմակերպության եւ Հայաստանի

ամերիկյան համալսարանի հետ համատեղ:

Այժմ գրադարանում դեռեւս ընթացում են առկա գրականության թվայնացման աշխատանքները, իսկ ժամանակակից տեխնոլոգիաներով կահավորված եւ հարմարավետ սրահներով գրադարանը, ընթերցանության վայրից զատ նաեւ յուրատեսակ կրթական, մշակութային, հասարակական կենտրոն է դարձել, տարբեր հանդիպումներ, միջոցառումներ, կինոդիտումներ իրականացնելու վայր:

Կապանի ակունքագրադարանային միավորումն ամեն տարի մասնակցում է «Ազգային գրադարանային շաբաթին»:

Իսկ միավորման թաղամասային գրադարաններն ապահովվել են համակարգչով եւ ինտերնետ կապով:

Ամեն տարի համոզվածությամբ նշվում է «Կապան քաղաքի օրը»: Ավագանու որոշմամբ այն հանրակրթական եւ ամեն հոկտեմբեր ամսվա 3-րդ շաբաթ օրվան, բայց սովորաբար միջոցառումները տեւում են մի քանի օր եւ մշակութային, մարզական տարբեր ձեռնարկներ են լինում: Քաղաքի օրը նաեւ առիթ է դառնում ամփոփելու տարվա մեջ կատարածը, մատնանշելու անելիքները, գնահատելու քաղաքի կյանքում ներդրում ունեցած անհատներին: Անցած տարի, օրինակ, միջոցառումների մեկնարկը տրվեց երկրի նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ, քաղաքի կենտրոնական հրապարակի նորակառույց շատրվանների բացմամբ:

Վերջին տարիներին համայնքում վերականգնվել է դեռեւս խորհրդային տարիներից ավանդաբար անցկացված «Կապանյան ձմեռ» միջոցառումը, որին խանդավառությամբ են սպասում հատկապես երիտասարդները:

Միջոցառմանը մասնակցում է նաեւ համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանը: Երգ-երաժշտության ճեղք կազմակերպվում են տարբեր մրցումներ, օրվա քաղաքից են դարձել նաեւ ավանդական խարույկն ու շուրջպարը:

Ամեն տարի ամռան ամիսներին անց է կացվում «Ուսանողական ամառ Կապան» փառատոնը, որը համախմբում է Կապանում եւ այլ քաղաքներում սովորող կապանցի ուսանողներին: Աշոտ Հայրապետյանը նախաձեռնեց այս փառատոնը դեռեւս 2012-ին, երբ դեռ համայնքի ղեկավար չէր, իսկ այժմ այն արդեն ավանդույթ է դարձել: Փառատոնը համախմբում է Կապանում եւ այլ քաղաքներում սովորող կապանցի ուսանողներին. մասնակցում է 150-200 ուսանող, նրանց համար տարաբնույթ միջոցառումներ են կազմակերպվում՝ մշակութային, ինտելեկտուալ, մարզական: Ուսանողները նաեւ հանգստանում են վրանային ճամբարում, այցելում Արցախ: Փառատոնի շրջանակներում մեկ օր քաղաքի ղեկավարները հանձնվում են ուսանողներին. ինքնակառավարման օրը բոլոր պետական պաշտոններում եւ հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների աթոռներին ուսանողներն են, ուսանող-քաղաքապետն ընտրվում է նախապես կազմակերպված ընտրություններով:

Փառատոնը լավ հարթակ է ուսանողների հանդիպման, նրանց ներուժի բացահայտման համար, նրանք սրանով եւ կարողանում են հետաքրքիր անցկացնել ամառը, քաղաքի առօրյային նոր շունչ հաղորդել, եւ ծանոթանում են միմյանց, ստեղծվում են ակտիվ ուսանողներից կազմված ընկերական խմբեր, որ ունենում են գաղափարներ, առաջարկներ, նախաձեռնություններ, հետագայում մասնակցում են համայնքի կյանքին

### ՀԱՆՐԱՅԻՆ ԿՅՈՒՆ

Գործում է քաղաքապետարանի պաշտոնական կայքը, որտեղ մշտապես լուսաբանվում է քաղաքապետարանի եւ համայնքի կյանքը, տեղադրվում են հայտարարություններ, քաղաքապետի եւ ավագանու որոշումները, հրապարակման ենթակա բոլոր պաշտոնական փաստաթղթերը:

Համայնքի բնակիչներին տեղական ինքնակառավարման մասնակից դարձնելու, նրանց ուղղակի կամ անուղղակի ներգործությունը քաղաքապետի եւ ավագանու կողմից ընդունվող որոշում-

ների վրա ապահովելու նպատակով, համայնքի ղեկավարին կից ստեղծվել է գործում են հանրային, երիտասարդական եւ գեղարվեստական խորհուրդներ, որոնք պարբերաբար գումարում են նիստեր, ընդունում որոշումներ, առաջարկներով դիմում ՏԻՄ-ին:

Կապանում վերականգնվել են շաբաթօրյակները եւ պարբերաբար կազմակերպվել՝ տարեկան մի քանի անգամ: Դրանց մասին նախապես տեղեկացվել են հիմնարկ-ձեռնարկությունները, բնակչությունը եւ ակտիվորեն մասնակցել: Շաբաթօրյակները կազմակերպվել են հատկապես տոնական օրերի նախօրյակներին:

Կապանում երիտասարդների շրջանում սկզբնավորվում է նաեւ կամավորական շարժումը. ստեղծվել է ակտիվ երիտասարդների մի շրջանակ, որոնց համախմբող երիտասարդական խորհուրդն է. նրանք անհրաժեշտության դեպքում հասարակական աշխատանք են կատարում, զանգվածային միջոցառումներ ժամանակ օգնում կազմակերպական հարցերում, զանազան ակցիաների հեղինակ դառնում:

Քաղաքապետարանը համագործակցում է նաեւ տարբեր ոլորտներում գործող հասարակական կազմակերպությունների հետ. որոշ ՀԿ-ների հետ փոխընթացում են համագործակցության հուշագրեր են ստորագրվել:

Կապանում հանգստյան գոտիներում եւ այգիներում 8 վայրում կան ազատ Wi-Fi գոտիներ, այսինքն անվճար անլար ինտերնետ կապից օգտվելու հնարավորություն:

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Չնայած հանրության սոցիալական խնդիրների լուծման համար պատասխանատու են պետական համապատասխան կառույցները, այդուհանդերձ քաղաքապետարանը դա իր լիազորություններից դուրս գործընթաց չի համարել եւ անմասն չի մնացել այդ հարցերի լուծումից:

Ամեն տարի եւ պարբերաբար տրամադրվել են տարբեր բնույթի սոցիալական օգնություններ անապահով խավերին: Իսկ հատկապես մեծ խնդիրները եւ նպատակահարմարությունը որոշել է քաղաքապետարանի սոցիալական հանձնաժողովը համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո:

Դրանք եղել են դրամական միջոցների, սննդի փաթեթների, վառելիքայտի, շինանյութի տեսքով:

Բացի դրանից քաղաքապետարանը պարբերաբար միջոցառություններ է ներկայացրել սոցիալական ծառայությանը՝ նպաստառուների ցանկից դուրս մնացած ընտանիքներին միանվազ դրամական օգնության ցանկում ընդգրկելու համար:

«Առաքելություն Հայաստան»-ի բարեգործական ճաշարանի գործունեությունն ապահովելու համար համայնքի բյուջեից 2014թ. հատկացվել է 2 մլն դրամ, 2015թ. եւ 2016թ. համայնքի միջնորդությամբ «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն բարեգործական ճաշարանի հատկացրել է տարեկան 4 մլն դրամ:

Քաղաքապետին կից երիտասարդական խորհուրդը, փոխքաղաքապետը, համայնքապետարանի այլ աշխատակիցներ պարբերաբար այցելում են բարեգործական ճաշարան, «Արծաթային» տարեցների կենտրոն, ծերերին պահում ուշադրության կենտրոնում, նրանց հետ նշում պետական եւ ազգային տոները:

Քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը տարբեր առիթներով այցելում է քաղաքի ամենատարեց բնակիչներին: Համայնքապետարանն աջակցում է նաեւ խոցելի խմբերի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին:

- Քաղաքապետարանի անմիջական հետեւողականության եւ կնքած համաձայնագրի շնորհիվ՝ ամբողջությամբ փոխհատուցվել է 2014-ի նոյեմբերին Արզաբերդ 17 հասցեում ջրատարի վթարից տուժած բնակիչների բնակարաններին եւ գույքին հասցված վնասը՝ մոտ 60,7 մլն դրամ:
- Ըստ «Հայքմոնոլոգյուղու» եւ քաղաքապետարանի միջեւ կնքված համաձայնագրի՝ վերանորոգվել են Բաղաբուրջ 17 շենքի վթարված մուտ-



Հունիս 2016թ., ապրիլյան պատերազմին մասնակցած կապանցի կամավորականների հետ՝ «Խոսքերի փոխարեն» հիշատակի միջոցառումից առաջ

քը, տանիքը, բակը:  
Չորս տարում համայնքային սեփականություն հանդիսացող 36 բնակարան է նվիրաբերվել դրանց փաստացի տիրապետողներին:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ**

Կապանի քաղաքապետարանը չի բավարարվել պետքույնի եւ համայնքային բյուջեի հնարավորություններով եւ բացի քաղաքի խնդիրների լուծման գործում տեղական դոնորների ընդգրկումից, ձգտել է համագործակցել միջազգային կառույցների հետ եւ իրականացրել ծրագրեր:

Բացի վերը նշված էլեկտրոնային գրադարանի հիմնման ծրագրից «Քաունթերփարթ ինթերնեյշնլ» կազմակերպության հետ հաջողվել է իրականացնել այլ ծրագրեր եւս:

Մասնավորապես, «Քաունթերփարթ ինթերնեյշնլ», ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության եւ Կապանի քաղաքապետարանի համաներդրմամբ ավելի քան 21 մլն դրամ գումարով նորոգվել եւ վերազինվել է մարմնամարզության մակապատանեկան մարզադպրոցը:

Համայնքի եւ «Քաունթերփարթ ինթերնեյշնլ» համաներդրմամբ քաղաքապետարանում ներդրվել է «Մեկ պատուհան» ծառայությունը, որի համար նորոգվել եւ կահավորվել է քաղաքապետարանի 3 սենյակ, կառուցվել են թեքահարթակներ, ծրագրի արժեքը 17 մլն դրամ է, որից 14,3 մլն-ը քաղաքապետարանի ներդրումն է:

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվել է ծրագիր՝ 26 մլն 600 հազ. դրամի չափով, որից 5 մլն-ը համայնքի ներդրումն է: Ծրագրով ներդրվել է կենցաղային աղբից պլաստիկ շշերի առանձնացում եւ պոլիէթիլենային տոպրակների կիրառման կրճատման նպատակով բազմակի օգտագործման պայուսակների արտադրության կազմակերպում, անվճար բաշխում բնակչությանը: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել աղբամաններ, մանիչ՝ հավաքված պլաստիկ շշերի սեղմման նպատակով, նորոգվել աղբատեղիներ:

Բազմակի օգտագործման պայուսակների պատրաստման գործում ընդգրկվել են կապանցի 30 կանայք՝ այդ կերպ ապահովվելով ժամանակավոր աշխատատեղերով:

«Վորլդ Վիժ Յայաստան» կազմակերպության կողմից նորոգվել է թիվ 2 ՆՈՒՅ-ի դահլիճը եւ վերակառուցվել Չորք թաղամասի խաղահրապարակը՝ 4 մլն դրամ ընդհանուր գումարով:

■ «ՔՀԻ ինթերնեյշնլ» կազմակերպության հետ համատեղ «Վորլդ Վիժ» կողմից



9 մայիսի 2015թ., հանդիպում Մեծ հայրենականի վեպերանների հետ

մանկական կենտրոնի, թիվ 2 եւ թիվ 13 ՆՈՒՅ-երի համար ձեռք է բերվել գույք՝ ավելի քան 1 մլն 282 հազ. դրամի չափով:

■ «Ձարգացման նախաձեռնություններ» տարածաշրջանային սոցիալ-տնտեսական ՀԿ եւ Կապանի քաղաքապետարանի միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում մշակվել է «Հեծանվային Կապան. կայուն փոխադրամիջոցների ներմուծում Կապան քաղաքային համայնք» ծրագիրը, որը ենթադրում է հեծանիվների կիրառում, կայանատեղիներ, երթուղիներ: Սրա շրջանակներում համայնքապետարանը ստեղծել է մեծ ու փոքր ծրագրեր ու ներկայացրել դոնորների: Եվ ահա փոքր ծրագրի շրջանակներում առաջին 7 հեծանիվն արդեն Կապանում է:

Վերջերս Կապանը միացավ Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը, որը հնարավորություն է տալիս հայտ ներկայացնել տարբեր ծրագրերի համար հատկապես էներգախնայող միջոցների կիրառման եւ այլընտրանքային էներգիայի ստացմանը վերաբերող ոլորտներում:

Հուլիսին համագործակցության հուշագրի է ստորագրվել Չինաստանի Նիքոն քաղաքի ղեկավարության հետ:

**ԳՆԱՀԱՏՆՔ**

Կապանի կյանքում շրջադարձային եղավ 2015 թվականը: Այն ոչ միայն առանձնացավ քաղաքում իրականացված մի շարք աշխատանքներով, այլեւ եղավ գնահատանքի տարի:

Ըստ Հայաստանի համայնքների միության եւ ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից համատեղ անցկացվող «Տարվա լավագույն համայնք» մրցանակաբաշխության արդյունքների՝ 2015 թվականի «Լավագույն քաղաքային համայնք» ճանաչվեց Կապանը:

Մրցանակաբաշխությունն անց է կացվում համայնքների կողմից գրավոր ներկայացված հայտերի հիման վրա, իսկ գնահատումն իրականացնում է հատուկ ձեւավորված մրցութային հանձնաժողովը: Մրցանակաբաշխության արարողությունը տեղի ունեցավ 2015թ. Մայիսի 10-ին՝ Ջերմուկ քաղաքում:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին մրցանակը հանձնեցին նախորդ տարում լավագույն համայնք ճանաչված Դիլիջանի քաղաքապետ Արմեն Սանթրոսյանը եւ ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը:

Իսկ 2015 դեկտեմբերի 22-ին Երեւանում «Համազգային վստահություն» խորհուրդն ամփոփեց «Վստահության վարկաբիշ-2015» անվանակոչման արդյունքները, ըստ որի՝ «Տարվա քաղաքապետ» մրցանակին արժանացավ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը:

**«Կապան» բարեգործական հիմնադրամ**

2013թ.	մուտք՝ 71,4 մլն դրամ, ծախս՝ 89,6 մլն դրամ:
2014թ.	մուտք՝ 51,4 մլն դրամ, ծախս՝ 32,5 մլն դրամ:
2015թ.	մուտք՝ 25 մլն դրամ, ծախս՝ 17 մլն դրամ:
2016թ. 1-ին կիսամյակ.	մուտք՝ 8,2 մլն դրամ, ծախս՝ 7,2 մլն դրամ:

Գումարները հիմնականում ծախսվել են տոնական միջոցառումների անցկացման, տարբեր նորոգման աշխատանքների, գույքի ձեռքբերման, դրամական եւ նյութական օգնությունների տրամադրման նպատակով:



Մտորումներ մրցասկզբից առաջ

## ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ.

### «Ապագան սկսվում է այսօր...» Թեմայով դպրոցական շարադրություններից մինչև համայնքի ղեկավար

12 ընդ մոտեցումներն այլ են ու առավել արդյունավետ:  
Համարում են իմ պատկերացրածի առաջին հարկը կառուցած եւ անելիքի հետագա ճանապարհի թափանցիկ շարժն են ուզում արագացնել:

Կարող են լինել նաեւ կառուցվածքային փոփոխություններ, ամեն ինչ եւ անընդհատ կատարելագործման կարիք ունի, չես կարող ասել՝ հերիք է այն կառուցվածքը, որ ունենք:

#### Չորս տարվա ամենամեծ ձեռքբերումս

Քաղաքում երիտասարդների ակտիվությունն է: Ե՛վ ասում են սա, ե՛ւ գիտեն, որ դեռ քիչ է, այն չէ, ինչ որ ուզում էի լինել... Բայց հենց այն, որ երիտասարդը գալիս է քաղաքապետարանի դիմաց անկաշկանդ նստում նստացույցի ու պլակատ պարզում, համարում են իմ հաջողությունը: Եվ հաջողություն է, առհասարակ, նրանց

ակտիվությունը, ձգտումը մասնակցելու համայնքային կյանքին, նրանց անկաշկանդ շփումները մախ միմյանց հետ ու նաեւ իշխանության ներկայացուցիչների հետ:

Ձեռքբերում են համարում եւ այն, որ այս կառույցի՝ քաղաքապետարանի դերը մոտեցրել են իր իրական դերին՝ ինչին որ պիտի ծառայի, համարում են, որ նրա նշանակությունը մարդկանց աչքերում ոչ թե նվազել, այլ բարձրացել է, անկախ նրանից՝ ինչքան սոցոզմություն կան վառելափայտ ենք տալիս: Համարում են, որ մարդկանց վստահությունն է կառույցի հանդեպ բարձրացել, նաեւ հենց այստեղ աշխատող մարդկանց պատկերացումն է քաղաքապետարանի մասին փոխվել: Նրանք ըմբռնել են, որ իրենք ծառայող են եւ ոչ՝ չինովնիկ, կան չի կարող լինել «զմա», վաղը կգաս» պատասխանը, բայց գիտեն նաեւ, որ շատերը միգրացիոն նեղացած են, որովհետեւ իրենց դերն է նվազել:

#### Բլից-ավարտ

Կապանցիներն այսօր առաջին հերթին հավատի կարիք ունի՝ հավատ սեփական ուժերի հանդեպ, քաղաքի եւ նրա ապագայի հանդեպ, հավատ իշխանավորի, վաղվա օրվա հանդեպ...

Կյանքիս ամենամեծ հաջողությունը համարում են ինքս ինձ հավատալը, ոչ թե ուժերիս կամ ունակություններիս, այլ՝ ուղղակի ինքս ինձ:

Կապանում սիրում են քայլել, սիրելի վայրեր շատ կան ու դժվար է առանձնացնել, միշտ շատ են սիրել վահանավանդը, ավելի ճիշտ՝ բնությունն է ձգում, սիրում են բնության մեջ քայլել՝ սարեր, ձորեր, անտառ ...

Տարվա եղանակներից ամենից շատ աշունն են սիրում:

Սիրում են հողի հետ աշխատանք, հատկապես ծաղիկ աճեցնել, բայց չորս տարի է՝ չեն հասցնում զբաղվել դրանով...

Շատ բան չէի ուզեմ փոխել ապրածիս մեջ, ոչ էլ Աստուծո կամքին հակառակվել, բայց կարելի էր փոխել բաներ, որ զուտ ինձնից էին կախված... Մեկ բան կփոխեի, որի մասին հաստատ Կապանում շատերը գիտեն. այնպես չէ, որ մեղավոր էի, բայց հետո ինքս ինձ սկսեցի մեղադրել, որ դա կարող էր չլինել, երեւի թե կարելի էր խուսափել...

Իմ մեջ թերություն են համարում ծխելը, ավելի շատ՝ անշնորհքություն, կուզեմայի չծխել...

Ժամանակին սպորտով շատ են զբաղվել, հիմա՝ ոչ, կուզեմայի ավելի ճիշտ ոչ թե սպորտով, այլ ֆիզկուլտուրայով զբաղվել: Երաժշտություն շատ են սիրում եւ ասիստում են, որ երաժշտական կրթու-

թյուն չունեն, ուրախ են, որ աղջիկներս ունեն...

Երեխա ժամանակ գրքերից ամենատպավորիչն ինձ համար «Ռեբենգոն Կրուզոն» էր, պատանեկան տարիքում Ռեմարկի «Երեք ընկերը», պոեզիայից Ախմատովա եւ Եսենին են սիրում, հիմա ավելի շատ մասնագիտական գրքեր են կարդում:

Խոհանոց եւս սիրում են, հաճույքով պատրաստում: Առհասարակ, կենցաղում չկա այնպիսի բան, որ համարեն՝ տղամարդուն վայել չէ անել, պարզապես կա հմտությունների եւ ունակությունների խնդիր, այսինքն՝ կան բաներ, որ կանանց մոտ առավել լավ են ստացվում:

Կապանում ամենաշատը ոգետրում են մեր երեխաները, այնքա՛ն լավն են... Ամենաշատը տխրեցնում են մեր անհանդուրժողականությունը, մեծահոգության պակասը, աճող անտարբերությունը՝ միմյանց հանդեպ, ամեն ինչի, քաղաքի հանդեպ:

Որպեսզի կապանցի երիտասարդն ուզեմ վերադառնալ այստեղ, իհարկե, կասեմ՝ առաջին հերթին աշխատանք է պետք, բայց երիտասարդին միայն դա չի գրավում, առհասարակ, միջավայրը պիտի ձգող լինի:

Իրեն վերջաբան, համաքաղաքացիներին ասում են՝ սիրենք մեր քաղաքը, սիրենք նրա բոլոր բնակիչներին, չառանձնացնենք իրար՝ ծագումով, արմատներով, սոցիալական դիրքով, առողջական վիճակով:

Պատճառ գտնենք ինքներս մե՛զ հարգելու, իսկ եթե յուրաքանչյուրը գտնի ու սովորի հարգել ինքն իրեն, կհարգի նաեւ մյուսներին: